Azg
armenian daily

27 ՅՈՒՆՈՒԱՐ 2000 ՀԻՆԳՇԱԲԹԻ 13 (1981)

Իսրայելի գաղտնի ծառայությունները լսող սարքեր են տեղադրել Եվրամիության շենքում

ՍՏԱՄԲՈՒԼ. 26 ՀՈՒՆՎԱՐ. ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպությունը ՄԻԹ-ը, Հելսինկյան համաժողովից առաջ, գործի դնելով արտերկրի գործակալական ցանցը, կարողացել է լսել Թուրքիայի վերաբերյալ Եվրամիության հանձնաժողովի ճնշարկումները: Այս մասին տեղեկացնում է թուրքական «Միլիեթ»-ը՝ վկայակոչելով ավստրիական «Դի Փրեսսե» օրաթերթը: Թերթը նշում է, որ որոշ ժամանակ առաջ Եվրամիության աշխատակազմում կասկածներ էին ծագել, թե շենքի աշխատասենյակները լսվում են գաղտնի ծառայությունների կողմից: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում աշխատասենյակներում հայտնաբերվել են լսող սարքեր: Եվրամիության շենքը վերանորոգել է իսրայելական շինարարական ընկերությունը եւ կասկածներ կան, որ վերջինիս միջոցով Իսրայելի գաղտնի ծառայությունները լսող սարքեր են տեղադրել շենքում: Իսրայելական ծառայություններն իրենց հերթին ծեռ բերված տեղեկությունները փոխանցել են իրենց թուրք գործընկերներին:

ՄՈՍԿՎԱ

Հույսերի գագաթաժողով՝ ԱՊՀ-ն հեղաշրջելու ակնկալիքով

Պուտինը շուտ կտա՞ հետխորհրդային տարածքը

ԱՐԱԹ ՊՈՂՈՍՅԱՆ
Մոսկվա-Երեւան

ԱՊՀ երկրների մոսկովյան գագաթաժողովի կենտրոնում, անկախ ճնշարկված հարցերի շրջանակից, ընդունված փաստաթղթերի բանակից եւ որակից, ՌԴ վարչապետ, նախագահի պատասխանատու Վլադիմիր Պուտինն էր, որի անձից սկսվում էին եւ ավարտվում ԱՊՀ կոչվող (իր իսկ գնահատմամբ) «չկայացած ամուսնությունը» վերջապես կայացնելու, համագործակցության գրեթե անշունչ մարմնին շնչառություն հաղորդելու հույսերը: Պուտինի նկատմամբ բացառիկ վստահության շեշտադրումներով էլ նշանավորվեց գագաթաժողովից հետո հրավիրված մամուլի ասուլիսը, որ Վլադիմիր Պուտինի նախընտրական արշավի ամենատպավորիչ էջը կլինի թերեւս: ԱՊՀ երկրների բոլոր ղեկավարները (հերթով) գովեստի խոսքեր

ուղղեցին ՌԴ նախագահի պատասխանատուի հասցեին՝ ընդգծելով նրա հրաշալի «դեբյուտը» գագաթաժողովի առաջատարի դերում եւ ցանկություն հայտնելով տեսնել նրան ՌԴ նախագահի պատասխանում: Ընդհանուր խորհրդատվերում առանձնացավ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որի զուտ, արժանապատիվ խոսքում, սակայն, արժանին հատուցվեց Պուտինին ծավալված անկեղծ խոսակցության տոնն առաջադրելու առումով: ՌԴ եւ ՀՀ նախագահներն առհասարակ մի ինչ տարբերվում էին մյուսներից թե «սպորտային կեցվածքի», թե տարիքի, թե ԽՍՀՄ ղեկավար նոմենկլատուրան չկրկնելու տեսանկյունից. երկուսն էլ խուսափում էին ընդհանուր, ոչինչ չասող ձեւակերպումներից եւ երկարաբանություններից խոսելով, ինչպես ասում են, ըստ էության:

Տես էջ 3

ՆՈՐ ԱՅԾ

Այսօր նախագահը կմեկնի Դավոս

Շվեյցարիայի Դավոս քաղաքում անցկացվող ամենամյա համաշխարհային տնտեսական ֆորումին մասնակցելու նպատակով նախագահ Ռոբերտ Քոչարյանը հունվարի 27-ին կմեկնի Դավոս: Նրա գլխավորած պատվիրակության կազմում են արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, արդյունաբերության եւ առեւտրի նախարար Կարեն Ճշմարիտյանը, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական Վահրամ Ներսիսյանցը, էներգետիկայի նախարարի տեղակալ Կարեն Գալուստյանը, պատասխանատու այլ անձինք:

Դավոսյան այցի շրջանակներում նախատեսվում են Ռոբերտ Քոչարյանի հանդիպումները տարբեր երկրների եւ միջազգային տնտեսական կառույցների ղեկավարների, մասնավորապես Ադրբեջանի, Արգենտինայի, Սլովակիայի նախագահների, Առեւտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղարի, Համաշխարհային բանկի նախագահի հետ:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՍԱՍԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ստեղծվում է հայ-ամերիկյան աշխատանքային խումբ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ ընդունեց ամերիկյան պատսպարական պատվիրակությանը՝ ԱՄՆ պետքարտուղարության ԱՊՀ երկրներին տրամադրվող օգնության գծով խորհրդական Բիլ Թեյլորի գլխավորությամբ: Ինչպես հաղորդում է ՀՀ նախագահի մամլո գրասենյակը, հունվարի 27-ին Բիլ Թեյլորը եւ ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը կստորագրեն Հայաստանի եւ ԱՄՆ կառավարությունների համագործակցության հուշագիր՝ հայ-ամերիկյան աշխատանքային խմբի ստեղծման վերաբերյալ: Բիլ Թեյլորի խոսքերով, հուշագիրը, որ նախատեսում է Հայաստանում ձեռներեցության զարգացման, տնտեսական բարեփոխումների աջակցության ակտիվացում, լուրջ խթան կհանդիսանա հայ-ամերիկյան տնտեսական համագործակցության զարգացման համար, ինչպես նաեւ կնպաստի ներդրումների հոսքի աճին:

«ՎԱՆՈ+11» ԳՈՐԾ

Պատժի մարտավարությունը Միրաղեյանի օգտի՞ն է

Վահան Հարությունյանը նորանոր հանգամանքների մասին է ակնարկում

ՍԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վահան Հարությունյանին հարցեր տալու հերթը հասել էր Վանո Սիրադեղյանի դատապատասխան Վանյա Սուքիասյանին: Հունվարի 24-ի նիստում նա հայտարարել էր, որ հարցեր շատ ունի, սակայն ցուրտ դահլիճում չի կարող աշխատել: Մեկ օրով դատական նիստը ընդմիջելուց հետո, հունվարի 26-ին, Վանյա Սուքիասյանը հայտարարեց, որ նախագահողը խախտում է դատավարության անմիջականության սկզբունքը, մասնավորապես երկու դատապատասխանների բացակայությամբ դատական նիստ է ընթանում: (Նշենք, որ ամբաստանյալներ Մուրադ Դաշտոյանն ու Հայկ Աղաջանյանը համաձայնեցին, որ իրենց դատապատասխանների բացակայությամբ դատական նիստը տեղի ունենա): «Դատարանի դահլիճը լքելուց առաջ ես դատական նիստի մասնակիցներին կրկին հիշեցնում եմ, որ ամբաստանյալ Հարությունյանին իմ կողմից ուղղվելիք հարցադրումները շոշափում են այստեղ ներկա բոլոր ամբաստանյալների շահերը, որի հիման վրա էլ դատարանին կրկին կոչ եմ անում դատավարությունը վարել գործի քննության անմիջական սկզբունքը առաջնորդվելով», հայտարարեց դատապատասխանը:

Իհարկե, հայտարարությունն անելուց հետո նա չլքեց դահլիճը: Նրան թերեւս ետ պահեց դատավորի նախազգուշացումը՝ «առանց նախագահողի թույլտվության պատասխանն իրավունք չունի լքելու դատարանի դահլիճը»: Նախագահողից էլ առաջ դատապատասխանին հակադրվեց պետական մեղադրողներից Աղվան Հովսեփյանը. «Վանյա Սուքիասյանն իր հայտարարությամբ եւ իր վարքագծով իրեն վերապահում է դատական նիստը վերահսկողի ֆունկցիա, մինչդեռ օրենքով նրա գործառույթները պետք է ուղղված լինեն իր պատժանյալի շահերի պաշտպանությանը: Դատավարությունն ընդհատվել է այն փուլում, երբ Վահան Հարությունյանին հարցեր պետք է տային ամբաստանյալ Սիրադեղյանն ու նրա փաստաբանը: Ինձ համար անհասկանալի է որեւէ Սուքիասյանի մղումը պատասխանություն իրականացնել նաեւ մյուս ամբաստանյալների համար: Օրենքի խախտում տեղի չի ունեցել, եւ դատախնությունը պետք է շարունակվի»: Հետաքրքիր չէ՞, որ Վանյա Սուքիասյանին չպատասխանեցին նաեւ իր գործընկերները դատապատասխանները, նույնիսկ հանդես եկան նրա հայտարարության դեմ:

Տես էջ 2

Հայաստանի հետ հարաբերությունների հարցում Անկարայի դիրքորոշումն անփոփոխ է

ԱՆԿԱՐԱ. 26 ՀՈՒՆՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների նորմալացումը հնարավոր է միայն ղարաբաղյան հակամարտության կարգավորման դեպքում, ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այսօր այստեղ հայտարարել է Թուրքիայի արտգործնախարարության պատասխանատու ներկայացուցիչ Սերմեթ Աթաջանլին: Նա նշել է, որ այդ հարցում իր երկրի դիրքորոշման որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել: «Մենք միշտ նշել ենք, որ հարաբերությունների նորմալացումը կհամապատասխանի երկու պետությունների եւ տարածաշրջանի շահերին, ասել է թուրք դիվանագետը: Դրական տեղաշարժեր հնարավոր է ակնկալել միայն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորման դեպքում»:

Գրոզնիում չեչեն հրամանատար է սպանվել

ՄՈՍԿՎԱ. 26 ՀՈՒՆՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Անցած գիշեր Գրոզնու հարավարեւմուտքում Միչուրինսկի ավանի մոտակայքում մղված կատաղի մարտի ընթացքում սպանվել է Իսա Ասամիրովը: Նա Մասխադովի կառավարության մեջ փոխվարչապետ էր, իսկ Չեչնիայում մարտական գործողությունների սկսվելուց հետո նշանակվել էր գրոհայինների հարավարեւմտյան ռազմաճակատի հրամանատար Ռուսլան Գելաեւի տեղակալ: Այս տեղեկությունն այսօր ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաստատեցին Ասլան Մասխադովի մամլո ծառայությունում: Ասամիրովի ջոկատը փորձում էր զսպել դաշնային ուժերի հարձակումը Խանկալիի կողմից: Առաջանալով հարավարեւմտյան ուղղությամբ, վերջիններս գրոհայիններին ոլանաչափորեն դուրս են մղում Միջուկա հրաղարակի շրջանից:

ՀԵՈԱԽՈՍԱՄՍԱՐՏ

Փոստի եւ հեռահաղորդակցության նախարար Ռուբեն Տոնոյանն անկանխատեսելի՞ է

Արմենտելի հետ հարաբերությունները տեղափոխվել են մարտադաշտ

Արմենտելի սեփականաշնորհումը հայոց մասնավորեցման պատմության, մեղմ ասած, ոչ փառունակ էջերից է, սակայն այս սեփականաշնորհման պայմաններն ամրագրված են պետության սնորագրությամբ, իսկ յուրաքանչյուր իրեն եւ գործընկերներին հարգող, արդյունում՝ միջազգային ատյարեզում վստահության վարկանիշ ունեցող պետությունը սիրված է հավի նստել իրենց անգամ նախորդ կառավարությունների սնորագրած որոշումների հետ՝ փորձելով շտկել սխալները կառուցողական, իրավական ուղիով: Վկան՝ Լոնդոնի արբիտրաժային դատարանում ծավալվող իրադարձություններն են, որտեղ OTE-ն փորձում է ճշգրտել իր հարաբերությունները TWT-ի հետ, այսինքն՝ ՀՀ պետքյուբե վճարել բանկված շահութահարկի գումարները՝ գրեթե 18 մլն դոլար:

OTE ընկերությանը պատկանող Արմենտելում բազմիցս ղեկավարներ են փոխվել, սկզբից նրանք հունահայերն էին, այսօր Արմենտելը ղեկավարում է Կիրիակոս Խրիստոդուլիդիսը, որի հետ Արմենտելի բաժնետերերի խորհրդի անդամ, փոստի եւ հեռահաղորդակցության նախարար Ռուբեն Տոնոյանը հակամարտությունների մեջ է, այդ հակադրությունը կարելի էր համարել արդյունավետ, եթե արդյունում չտուժեր պետության վարկը, բայց Աբեթե մեկնած փոստի եւ հեռահաղորդակցության նախարարը ձախողել է Արմենտելի բաժնետերերի նախատեսված նիստը՝ այնտեղ կատարելով, ըստ էության, կառավարության հետ չհամաձայնեցված կտրուկ քայլեր եւ հայտարարություններ: Ի հետեւանս՝ Խրիստոդուլիդիսը միակողմանիորեն, մեր նախարարի՝ կողմից անօրինական ղեկավար է «հռչակվել», այսօրից բխող բոլոր հետեւանքներով, իբրեւ թե Խրիստոդուլիդիսի սնորագրած բոլոր որոշումներն ապօրինի են եւ օրենքի ուժ չունեն: Իրականում հայաստանյան կառավարության խնդիրն է Արմենտելի բաժնետերերի խորհրդում հասնել օրենքով սահմանված ներդրումային ծրագրի իրականացմանը, մենաշնորհի սահմանափակմանը:

Ռուբեն Տոնոյանի հայտարարությունները գրեթե միջպետական տագնապ են առաջացրել: Հունաստանի դեսպանը բանակցային գործընթաց է սկսել մեր կառավարության հետ՝ փորձելով ճշգրտել, թե նման կտրուկ հայտարարությունները նախարարի անձնական նախաձեռնությունն են, թե՞ կառավարության դիրքորոշումը: Որոշակիորեն անհանգստացած է նաեւ Վերակառուցման եւ զարգացման եվրաբանկի հայաստանյան ներկայացուցիչը, որն այս տարի պատրաստվում էր լուրջ ծրագրեր իրականացնել Արմենտելում:

Ն. Ղ.

ԱԶԳ

ըմբացիկ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Տնտեսական ահազանգեր

Միջկուսակցական սոցիալ-տնտեսական խորհրդում

Ուիջկուսակցական սոցիալ-տնտեսական խորհուրդը, որը պարբերաբար ճնշարկումներ է անցկացնում երկրի տնտեսության ու կառավարության համար ցավոտ դարձած տարբեր հարցերի վերաբերյալ, երեկ անդրադարձավ եւս մի շանի անհաղթահարելի միջոցառումներ պահանջող խնդիրների: Քննարկմանը, խորհրդի անդամ-կուսակցությունների հետ, առաջին անգամ մասնակցում էր ՀԺԿ ներկայացուցիչը՝ դիտորդի կարգավիճակով:

Սրանից թերևս ենթադրենք, որ խաղաղական ուժերի հետաքրքրությունը խորհրդի հանդեպ հետզհետե աճում է ու կաճի, քանզի երկրի տնտեսությունում ստեղծված աղետալի վիճակը բոլորին էլ հավասարապես հուզում է, մտորումներ ու առաջարկներ անելու տեղիք տալիս:

Այս անգամվա ճնշարկման կարեւոր նյութերից մեկը դարձավ ավիացիայի հարցը: Գաղտնիք չէ, որ տեղական ավիացիան այժմ ծանր վիճակում է հայտնվել թե՛ տեխնիկական դատարկականության, թե՛ (ինքնըստինքյան) ֆինանսական, թե՛ կադրային հաղթականության առումներով, թեպետ այս ոլորտի խնդիրներն իմանալով, գերադասում են չխոսել ու մոռացության մատնել: Սնշուշտ, լուծումը հարցի լուծման ծեւ չէ, այս մտածողությանը հետեւողական սոցիալ-տնտեսական խորհրդի անդամները, յուրաքանչյուրն իր հերթին ու վերջին շաբաթվա ընթացքում կատարած աշխատանքի իր չափով, համատեղ ճնշարկման նյութ դարձրին ծեռք բերած փաստաթղթերը, համաձայն որոնց 1988-95 թթ. ժամանակահատվածում արհեստավարժությամբ իրեն լիովին արդարացրած մեր ավիացիան, որպես համակարգ, այժմ ծանր պայմաններում է հայտնվել: Ըստ խորհրդի տվյալների երբեմնի աշխատակազմը ներկայացնող արհեստավարժների մեծ մասը ներկայումս գործազրկության է մատնված, իսկ ինքնաթիռների կադրային սխալ հաղթահանգի կադրային սխալ հաղթահանության հետեւանքով նրանց «տեղերը» զբաղեցրել են պակաս փորձառու մասնագետները: Նոր կադրերի պատրաստման գործընթաց, ըստ էության, չկա, որովհետեւ չունենք համապատասխան ուսումնական հաստատություն: Այսօր մեր ավիացիան իրեն կարող է աղաիովել լոկ տեխնիկական կադրերով, իսկ օդաչուներով՝ ոչ:

Երկարատեւ խոսակցության նյութ դարձավ նաեւ ելիի պետական տուրիզմ

ԱԶԳ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Ո՞վ է ավելի շատ «սիրում»... Վլադիմիր Պուտինին

Հայաստանը պետք է պատրաստվի դիմագրավելու աշխարհաքաղաքական նոր մարտահրավերներ

Այնուամենայնիվ, մարքսիզմի դասականները ակնհայտորեն թերագնահատում էին անհատի դերը պատմության մեջ: Հիվանդ Ելցինին առույգ Վլադիմիր Պուտինով փոխարինելուց անմիջապես հետո ոչ միայն Ռուսաստանում, այլեւ աշխարհում քաղաքական մթնոլորտը նկատելի փոխվել է: Նույնիսկ Եվրոպայի խորհրդի լիագումար նիստը մինչեւ առիթ «հեռագեց» Ռուսաստանին այս միջազգային կազմակերպությունից հեռացնելու հարցի քննարկումը, կարծես մի յուրօրինակ ժամկետ տալով Մոսկվային, որ մինչ այդ չեչենների «հարցը լուծի»: «Մեծ յոթնյակի» արտգործնախարարներն իրենց հերթին ծեռնոպահ մնացին ռուսների նկատմամբ ֆիզ թե շատ լուրջ տնտեսական պատժամիջոց կիրառելուց, բավարարվելով «կսմիթներով»: Սակայն ամենացայտունը ԱՊՀ երկրների հունվարի 24-25-ի գագաթաժողովն էր: Նախ, մասնակցում էին անխոհիր բոլոր նախագահները, որոնցից Շեւարդնաձեն, Ալիեւը, Կուչման, Նիյազովը նախկինում առիթներով պարբերաբար բացակայում էին: Երկրորդ Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի բերանով հայտարարություն արվեց, թե «ԱՊՀ-ն ֆաղաքական հեռանկար ունի»: Ոչ այնքան վաղուց թե նա, թե մյուսները շատ լրջորեն կասկածի տակ էին դնում այդ հնարավորությունը: Երրորդ հին, կոմունիստական ժամանակների «բարի» ավանդներով Ալիեւը, Քարիմովը ուղղակիորեն, մյուսները, բացառությամբ, թերեւս, Քոչարյանի, անուղղակիորեն հոժարակամ տանձնեցին Պուտինի «ախորժակի» չափը:



Վաշինգտոնը 180 աստիճան շրջադարձ է կատարում՝ պատրաստվելով Մոսկվա գործուղել պետքարտուղար Մադլեն Օլբրայթին...

Այս ամենը վկայում է հետեւյալը.

1. Եվրոպան ամենեւին էլ մտադիր չէ հանուն չեչենների վտանգել իր հարաբերությունները ռուսական արթնացող արջի հետ (լեհերն այդ պիսի մի փորձ արին օրերս «անհակակշռելու նպատակով: Դրա առաջին «ծիծեռնակը» Սուլեյման Դեմիրելի ուղերձն էր... հայ ժողովրդին, որը չգիտես ինչու, մեզանում ընդունվեց անհարկի խանդավառությամբ: Դժվար է ասել, թե մեր նկատմամբ թուրերի այդ «սիրալիրությունը» մինչեւ ո՞ւր կարող է հասնել, բայց չի բացառվում Հայաստանի ցամաքային շրջափակման գոնե մասնակի «ցուցադրական» վերացումը, Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղու վերագործարկման առաջարկությունը, ադրբեջանական նավթը Մեղրու վրայով Նախիջեւան ու Թուրքիա տարանցիկ խողովակաշար կառուցելու մեզ համար արտոնություններ, բայց խորհուրդ խիստ վտանգավոր ծրագրի վերարծարծումը եւ այլն:

5. Վերջապես, ակնհայտ է, որ Չեչնիայի «հարցը վերջացնելուց» հետո Պուտինը վերանայման է ենթարկելու ԵԱՀԿ Սամբուլի գագաթաժողովում ՀՀ նախագահի արած առաջարկությունը տարածաշրջանային անվտանգության համակարգ ստեղծելու մասին, փորձելով դրան հակադրել «բոլոյակ համածայնության» գաղափարը (Ռուսաստան, Վրաստան, Ադրբեջան, Հայաստան), դրանով իսկ այդ առայժմ ենթադրյալ համակարգից փորձելով դուրս թողնել իր համար անցանկալի ԱՄՆ-ին ու Թուրքիային: Սա կառաջացնի ոչ միայն վերջիններիս, այլեւ Իրանի դժգոհությունը:

Այսպիսով, մոսկովյան իշխանափոխությունը «խոսանում» է ուժերի լուրջ վերաբաշխում կովկասյան տարածաշրջանում: Ենթադրել, թե այդ ամենը կկատարվի առանց պայքարի միաժամանակ է: Կովկասը, Անդրկովկասը մասնավորապես, կրկին դառնալու է աշխարհաքաղաքական շահերի բախումն ու բացահայտ բախման կիզակետ: Շատ դժվար է կանխատեսել, թե այդ բախումը ի՞նչ կոնկրետ ձեւեր կընդունի: Հնարավոր է քաղաքական զարգացումների շատ լայն ներկայիսկ սիրալիր ժպիտներից ու ակնջ շոյող հայտարություններից մինչեւ ուժի գործադրման տարօրինակ եւ նույնիսկ գործադրում ավելի շատ «ուրիշի ձեռքերով», իրադրությունը «ներսից պայթեցնելու», առայժմ «պահածոյացված» հակամարտությունները բորբոքելու ճանապարհով: Սա վերաբերում է թե վրաց-աբխազական, թե հայ-ադրբեջանական հակամարտություններին:

Այս ամենը նոր մարտահրավերների առաջ է կանգնեցնելու բոլորին, այդ թվում մեզ: Իսկ ցանկացած մարտահրավեր ըստ արժանվույն դիմագրավելու համար հրամայական անհրաժեշտություն է երկրի բոլոր կարելիությունների համախմբումը: Թե ինչպե՞ս այլ խոսակցության նյութ է: Եվ առաջին հերթին երկրի իշխանությունների մտահոգության առարկան:

ՆԱՓԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հույսերի գագաթաժողով՝ ԱՊՀ-ն հեղաշրջելու ակնկալիքով

Սկիզբը էջ 1

Հայկական կողմի համար հանգուցային հանդիպումներից մեկը «կովկասյան գագաթաժողովն» էր՝ Քոչարյան-Ալիեւ-Շեւարդնաձե-Պուտին, որը տեղի ունեցավ վարչապետների խորհրդի նիստին գրեթե զուգահեռ, իբրեւ 1996 թ. Կիսլովոդսկում կայացած համանման, բայց, ցավոք, դրվագային հանդիպումը կայուն տարածաշրջանային համագործակցության վերածելու նախաձեռնություն, որի փակագծերը, լրագրողների հարցին ի պատասխան, առաջինը Ռոբերտ Քոչարյանը բացեց. հստակ որոշումներ չեն ընդունվել, սակայն հաջակողմ հանդիպումները, տարածաշրջանային անվտանգության ընդունելի բանաձեւի որոնումը շարունակելու պայմանավորվածությունն առկա է: Ցավոք, առկա է նաեւ մոտեցումների տարբերություն, որն առայժմ չարժե բանավեճի առարկա դարձնել, գլխավորը հաջակողմ հանդիպումներին համակարգված բնույթ հաղորդելն է, ասաց ՀՀ նախագահը: Վրաստանի նախագահը բավարարվեց ընդհանուր արտահայտություններով, իսկ Հ. Ալիեւը նախ կշտամբեց Ռուսաստանին՝ առ այսօր կովկասյան անհանգիստ տարածաշրջանը «հանգստացնելու» գործում բերանալուր համար, հետո, արեւելյան դիվանագիտության լավագույն ավանդույթներով «շոյեց» Պուտինին՝ սկսված նախաձեռնությունն արդեն իսկ առաջընթաց ֆայլ համարելով եւ տարածաշրջանային հակամարտությունները, հատկապես «Հայաստան-Ադրբեջան» կնճիռը հարթելու հարցում Ռուսաստանի դերը շեշտելով: Պուտինը ներկայացրեց կովկասյան համագործակցությունը շարունակելու հիմնարար սկզբունքը՝ «չվնասել», նոր ջրբաժաններ, ԱՊՀ համագործակցության կամ հարեւան երկրների համար նոր խնդիրներ չստեղծել եւ Հայաստանի համար բավական վտանգավոր մի շեշտադրում արեց. «Բանավեճը շարունակելու են մի-ջազգային իրավունքի ամենաառանցքային նորմերից մեկի՝ տարածքային ամբողջականության բացառիկ ճանաչման դիրքերից: Հուսով եմ, այդ ասելով բոլորս նույն բանն են հասկանում»:

«Ձվարքնոց» օդանավակայանում, սակայն, լրագրողների հարցերին պատասխանելով, նախագահ Քոչարյանը «հերքեց» Պուտինի վերջին նկատառումը՝ ասվածն ավելի շատ Չեչնիայի հակամարտությանը վերագրելով. տարածքային ամբողջականությունը նաեւ Հայաստանին է պետք, այլ հարց է, որ Ղարաբաղի հարցում որոշիչ ինքնորոշման դրույթը պետք է լինի, ինչը Չեչնիայի պարագայում որոշ միջազգային ահաբեկչություն է որակվում: Սա էլ, թերեւս, մոտեցումների այն տարբերությունն է, որ հրապարակային վկայակոչեց ՀՀ նախագահը՝ Հայաստանի դիրքորոշումը բանավեճի առարկա չդարձնելով:

ԱՊՀ երկրների ղեկավարների խորհուրդը սկզբում «նեղ» (բացառապես նախագահների) շրջանակում ծավալվեց՝ միջազգային ահաբեկչությանը հակազդելու հնարավորությունների ընդլայնմամբ եւ Պուտինին խորհրդի նախագահ ընտրելու միաձայն որոշման ընդունմամբ: Լիագումար նիստում ընդլայնված հարցերի համախումբն առավել բազմազան էր. ԱՊՀ գործադիր քարտուղարությունը եւ միջպետական տնտեսական խորհուրդը միավորող նոր մարմնի՝ գործադիր կոմիտեի եւ տնտեսական խորհրդի դրույթների ընդունում, փոփոխություններ պատժանության նախարարների խորհրդի դրույթներում, ԱՊՀ երկրների ղեկավարների 1999 թ. ապրիլի 2-ի որոշումների կատարման ընթացքը, իրավապահ մարմինների միջպետական համագործակցության, կազմակերպված հանցագործության դեմ համատեղ պայքարի միջոցառումները մինչեւ 2000 թ. եւ դրանց հեռանկարը մինչեւ 2003 թ. ու այլ խնդիրներ: Հունվարի 25-ին 73 տարին բոլորած էդ. Շեւարդնաձեի խնդրանքով գագաթաժողովի օրակարգից հանվեց աբխազական հակամարտության կարգավորման վերաբերյալ 1999 թ. ապրիլի 2-ին ընդունված որոշման ընթացքի մասին տեղեկատվությունը, որ ներկայացնելու էր գործադիր քարտուղար Յուրի Յարովը: Հետաձգվեց նաեւ ռազմական համագործակցությունը համակարգող շաբաթի նշանակումը:

Փոխարենը, գագաթաժողովի օրակարգից դուրս, լրջորեն քննարկվեց տնտեսական համագործակցության խթանման, տնտեսական ինտեգրացիայի խնդիրը, որ առավելագույնս հստակ ձեւակերպեց Ռոբերտ Քոչարյանը. գործուն համագործակցություն ապահովելու համար տնտեսական զարգացման մոտեցումների որոշ միասնականացում, միջկառավարական կաղապարների նախապայմաններ են անհրաժեշտ, ինչը ,տնտեսական ինտեգրացումն իմնականում իմնական հունով կուղղորդի՝ ընդունված որոշումներն ուժային հնարքներով առաջ մղելու պարտադրանքին հակառակ: Միևդեռ ապրանքաշրջանառության ցուցանիշները հակառակն են ասում. առայժմ, ի հեռուկս բոլոր ջանքերի (եւ ցանկություններ- Լ. Պ.), գերիշխողը «ապահինտեգրացումն» է:

ԱՊՀ երկրների նախագահների «հավետու» ասուլիսի շեշտադրումները գրեթե միատեսակ էին. ակնկալիքների վերելք (Պուտինի անձի հետ կապված), վստահության իավարտիֆներ ղեկավարների խորհրդի նորընտիր նախագահին, ՈԴ առաջիկա նախագահական ընտրություններում հաղթելու բարեմաղթանքներ եւ, իհարկե, համագործակցությունն «ի գործ» մղելու վճռականություն:

Ադրբեջանի նախագահի խոսքը խորհրդային ժամանակների ոճով էր, սկսվեց օրվա պատմականության արձանագրումից եւ շարունակվեց Պուտինին նվիրված շռայլ որակումներով: Հարցերին պատասխանելով, Հ. Ալիեւն առիթ գտավ ընդգծելու, որ Ադրբեջանի ռուսալեզու բնակչությունն ամենաբարեմոտ վիճակում է եւ նվազագույն արտահոսն է արձանագրել ԱՊՀ երկրների շրջանում, ՈԴ նախագահի պատճռնակատարն էլ հատատեց սույն իրողությունը:

Վլադիմիր Պուտինը հավատեց, որ ԱՊՀ երկրների հետ համագործակցությունը Ռուսաստանի բացարձակ առաջնահերթությունն է: ԱՊՀ տարածը, որտեղ բազմաթիվ ռուսներ են բնակվում, ոչ թե ԽՍՀՄ-ից պահպանված մնացորդային երեւույթ է, այլ ինքնահաստատված անկախ երկրների համախումբ, որը պետք է խորհրդային ժամանակների լավագույնը վերականգնելու մեխանիզմներ մշակի:

Որոշ կենտրոններ պատրանքներ են տածում, թե հետխորհրդային տարածքում առաջացել են քույլ կետեր, որտեղ ակտիվորեն կարող է զարգանալ միջազգային ահաբեկչությունը եւ ծայրահեղականությունն ամենատարբեր դրսեւորումներով: Մենք իրավունք չունենք եւ չենք տա նրանց այդպիսի հնարավորություն, ընդգծեց Պուտինը՝ միասնական ջանքերն առավել եռանդուն, վճռական եւ արդյունավետ դարձնելու վստահություն հայտնելով: Վկա՝ գագաթաժողովի մասնակից բոլոր երկրների անվերապահ համերաշխությունը միասնական հակահաբեկչական կենտրոնի ստեղծման վերաբերյալ Ղազախստանի նախագահի «տարաօրակարգային» առաջարկին, ասաց նա՝ կարեւորելով Ուզբեկստանի եւ Դաղստանի տարածում առաջիկա զարնանը 5 երկրների մասնակցությամբ համատեղ ռազմական զինավարժություններ անցկացնելու պայմանավորվածությունը:

Ավելացնենք, որ «Ձվարքնոց» օդանավակայանում հրնքացս տեղի ունեցած ճեպազրույցում նախագահ Քոչարյանը խորհուրդ տվեց չափազանցված հույսեր չկապել ոչ ԱՊՀ-ն կարճ ժամանակում հիմնովին վերակառուցելու եւ տնտեսական ինտեգրացիան միանգամից խորացնելու, ոչ էլ (ավաղ) ԼՂՀ հիմնախնդիրը մի հարվածով կարգավորելու հարցում. երկխոսությունը շարունակվում է, Քոչարյան-Ալիեւ հերթական հանդիպումն ակնկալվում է արդեն իսկ օրերս Դավոսում կայանալիք համաշխարհային տնտեսական ֆորումի ընթացքում:

ԱԶԳ

ԱՍԱԼԱ-25

Երբ «թղթե շերեփի» ժամանակներն անցել են

1975 թ. հունվարի 20-ին ամբահարվեց Բեյրութում գտնվող «ԱՆՉԱ» կազմակերպության (Համաշխարհային եկեղեցական խորհրդի) լիբանանյան գրասենյակը, որը, չնայած իր մարդասիրական անվանը, զբաղվում էր Միջին Արեւելքի երկրներում բնակվող հայ բնակչության հավաքագրմամբ եւ աշխարհի ամենատարբեր երկրներ ուղարկելով: Բավականին հզորացած հայկական գաղութներն աղեղն անհանգստացնում էին թուրքական իշխանություններին, նրանց բարեկամներին, որոնք ցանկանում էին ամեն կերպ թուլացնել հայկական ազդեցությունը, հայերի ամեն մի համախմբում, թեկուզ դա լիներ օտար երկրում: Մեկ խոսով ասած, 1915 թ. հայոց ցեղասպանությունը պետք էր ավարտին հասցնել: Հետեւաբար միանգամայն հասկանալի էր հայկական կողմի հակադարձությունը: Ասվել եւս տասնամյակների փորձը մի բան էր սովորեցրել. խղճահարությամբ, աշխարհի գութն աղերսելով, «բղթե շերեփներով» ոչնչի չէիրն հասել:

1975 թ. հունվարի 20-ն էլ համարվում է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) ծննդյան օրը, կազմակերպություն, որի մասին այս հոդվածում դարում հատկապես Հայաստանում պարզապես լեգենդներ են պտտվում: Ժամանակին ու պատմությանը թողնենք այս կազմակերպության գնահատումը, առավել եւս, որ ծահագրգռված շատ ու շատ պատմաբաններ (եւ մեզանում, եւ օտար) բազում ուսումնասիրություններ են նվիրել ԱՍԱԼԱ-ին: Չերծ մնալով որեւէ կողմնակալ մեկնաբանությունից, ընթերցողին ենք ներկայացնում մի քանի փաստաթուղթ, որոնք Հայաստանում հայտնի են իչ մարդկանց:

Առաջինը ՀԱՀԳ բանակի (ԱՍԱԼԱ) հաղաքական ուղեգիծն է, որի կետերը մշակվել են այս կազմակերպության ստեղծման հենց առաջին օրերին: «1. Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը հաղաքական կազմակերպություն է, որն աշխատում է պայքարի առաջնորդել հայ ժողովրդին թուրքական գաղութարարության կողմից բռնագրավված հայկական հողերի ազատագրության համար:

2. Մեր կազմակերպությունն առաջնորդվում է գիտական հեղափոխական սկզբունքներով:

3. Մեր կազմակերպությունն արտահայտում է հայ ժողովրդի ծգտումները եւ մերժում է թուրքական ազգայնամոլ իշխանավորների ներկայացրած ազգային ու դասակարգային ճնշող լուծը:

4. Մեր կազմակերպությունը հավատում է, որ հեղափոխական գործունեությունը հիմնական ու գլխավոր միջոցն է եւ թուրքական գաղութարարության կողմից մեր ժողովրդին պարտադրվող բռնության ու շահագործմանը դիմակայելու ճիշտ ուղին:

5. Մեր կազմակերպությունը հաշխարհային հեղափոխական շարժման մի մասն է: Հետեւաբար ծգտում ենք սերտացնել եւ ընդլայնել մեր համագործակցությունը նրա հետ՝ հաշոզված լինելով, որ աշխարհում հեղափոխականների միությունն անհրաժեշտ պայման է իրավազրկված ժողովուրդների եւ դասակարգերի դաշերը հաջողությամբ ավարտելու համար:

6. Թուրքական իշխանությունների բռնագրաված հայկական հողերի ազատագրությունը պետք է հետեւի շրջակա այլ հողատարածքների միացումը եւ ժողովրդավար, ընկերվար եւ հեղափոխական մի իշխանության հիմնումը:

7. Ազատագրական մեր պայքարը մենք մղում ենք աշխարհի այն բոլոր շրջաններում, ուր ադրում է մեր ճնշված ժողովուրդը եւ բոլոր այն վայրերում, ուր գտնվում են մեր բռնապիրները՝ Թուրքիան իր կենտրոններով եւ շահերով եւ նրա դաշնակիցները:

8. Խորհրդային Միությանն ու մյուս ընկերվարական պետություններին հաշոզել, որ թիկունք դաշնան ադգար եւ իրավացի հայկական հարցին ու միաժամանակ սատար կանգնեն Խորհրդային Հայաստանի մեր ժողովրդին, որպեսզի հայրենիքը հեղափոխական հիմք ստեղծի ժողովրդական երկարատեւ պայքարի համար՝ ի խնդիր կայսերապաշտության եւ հետադիմության դաշնակից թուրքական գաղութաշիրության կործանման»:

Երեխուկես տարի ԱՍԱԼԱ-ի մասին գանգվածային լրատվական միջոցները գրեթե ոչինչ չէին կարողանում հրապարակել, քանզի կազմակերպությունը նպատակահարմար էր գտնում որեւէ լուր չտրամադրել թերթերին, հեռուստատեսությանը եւ ռադիոյին: Ի վերջո, 1978 թ. հուլիսի 10-ին եվրոպական երկրներից մեկում ՀԱՀԳ բանակի դեկավար Հակոբ Հակոբյանն ընդունում է Պաղեստինի ժողովրդային Պայքարի ճակատի «Նիսալ էլ-Շաաբ» շաբաթաթերթի թղթակցին եւ պատասխանում նրա հարցերին:

Իսկ նույն տարվա նոյեմբերի 9-ին Բեյրութում տեղի է ունենում ԱՍԱԼԱ-ի մամլո առաջին ասուլիսը, որին մասնակցում են միջազգային լրատվական գործակալությունների եւ թերթերի ներկայացուցիչներ:

Մամլո ասուլիսի սկզբում պարզաբանվում է այս հանդիպման իմաստն ու կարեւորությունը, նշվում, որ այն հրավիրվել է Հայ դատը միջազգային հանրային կարծիքի սեփականությունը դարձնելու համար: «Մենք այստեղ ենք եկել հասատելու Հայ դատի անժամանցելիությունը եւ մեր շարժման իրական պատկերը պարզելու համար, հերքելով այն բոլոր խեղաթյուրումները, որոնք տարածվում են իմպերիալիստական ուժերի կողմից՝ նպատակ ունենալով աղավաղել մեր շարժման ճշմարիտ պատկերը», ասվեց մամլո ասուլիսում: Այնուհետեւ միջազգային լրատվական կազմակերպությունների ներկայացուցիչներին խնդրվում է հարցեր տալ:

Ասոշիեյթեդ պրես– Անցած տարիների ահաբեկումների մի շարք գործողություններ իրականացվեցին թուրքական պատասխանատուների նկատմամբ: Չեր կազմակերպությունը ստանձնո՞ւմ է այդ ահաբեկումների պատասխանատվությունը, թե՞ կան հայկական կամ ոչ հայկական ուրիշ կազմակերպություններ, որոնց պետք է վերագրվեն այս գործողությունները:

– Բոլոր ռազմական գործողությունների համար, որոնք կատարել ենք Թուրքիայում կամ այս երկրից դուրս, մեր կազմակերպությունը ստանձնել է պատասխանատվությունը:

Ռոյթեր– Որտե՞ղ է կազմակերպության կենտրոնատեղին՝ Թուրքիայո՞ւմ, թե՞ որեւէ ուրիշ տեղում:

– Մեր կազմակերպությունը տարածված է աշխարհի բոլոր կողմերում, մենք Բեյրութում ենք, Անկարայում եւ Ստամբուլում, ներկա ենք վեց այն հեղափոխական կայծի շնորհիվ, որ բռնկվեց ՀԱՀԳ բանակի կողմից: Մեր գինյալների թիվը սփյուռքի հայության թիվն է:

Ռոյթեր– Ինչո՞ւ ամբահարեցիք «ԱՆՉԱ»-ն:

– «ԱՆՉԱ»-ն ամերիկյան գաղտնի գործակալության որջերից մեկն է, որ զանազան առաքելություններ ուներ Բեյրութում: Դրանցից մեկը Միջին Արեւելքից եւ ընկերվարական երկրներից հայերի գաղթը դյուրացնելն է եւ նրանց բնակեցումը ԱՄՆ-ում: Այս դավի նպատակը հայերի մի հոծ զանգվածի հեռացումն է հայրենամերձ շրջաններից, որպեսզի նույնիսկ ապագայում նրանց համար դժվար լինի մտածել կորսված հողերը վերադարձնելու մասին: Դրա փոխարեն գաղթած հայերով ԱՄՆ-ում պետք է ստեղծվեր մի նոր հանրապետություն:

ԱՍԱԼԱ-ի գործողությունները հաճախ ներկայացվում են որպես զուտ ահաբեկչական արտահայտություններ: Գուցե սա էր պատճառը, որ ՀԱՀԳ բանակի ղեկավարներից Միհրան Միհրանյանը 1983 թ. օգոստոսի 20-ին ընդունեց Լոնդոնի «Միդլ Իսթ» թերթի թղթակից Նարտ Հաճաժին: Բեյրութի բեեաա շրջանում եւ պատասխանեց նրա հարցերին: Հաճաժը նախ խնդրում է հակիրճ ներկայացնել Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի հիմնադրության հետ կապված հարցերը:

Միհրան Միհրանյանն արաբ լրագրողին հանգամանորեն բացատրում է, որ մինչեւ 1975 թ. հայկական հարցն աշխարհին ներկայացված էր ոչ այնպես, ինչպես հարկն է: «1975-ից այս կողմ տեսնում ենք, թե հայկական հարցն ինչպես է գրավել տեղեկատվությունների առյուծի բաժինը, ասում է Միհրան Միհրանյանը: Նախկան 1975 թ. չկար իաղաքական կամ ռազմական շոշափելի որեւէ գործողություն: Սակայն այսօր տեսնում ենք, թե ծախը, կենտրոնն ու աջը բոլորն էլ խոսում են, հայ չունեցոր զանգվածը հետաքրքրվում է մեր կազմակերպությամբ, օժանդակություն է ցուցաբերում նաեւ հայ խոշոր եւ մանր բուրժուազիան: Այսօր աշխարհի պետությունների արտաքին նախարարությունները բացել են հայկական հարցի թղթածարը:

«Միդլ Իսթի» թղթակիցը հարցնում է.

– Եվրոպայի տարածքում ձեր կատարած գործողությունների եւ հատկապես Օռլի օդանավակայանի գործողության ընթացքում զոհվեցին նաեւ շատ անմեղ իաղաքացիներ, ովքեր ոչ մի կապ չունեին թուրքական կառավարության եւ վարչակարգի հետ: Չե՞ք կարծում, որ սա կարող է ազդել ձեր Հայկական հարցի արդարացիության, համաշխարհային հանրային կարծիքի աջակցության վրա:

– Հարգելով համաշխարհային հանրային կարծիքը եւ խոր ցավ հայտնելով զոհերի ընտանիքներին, ասում է Միհրան Միհրանյանը, ցանկանում ենք շեշտել հետեւյալը. հայ-թուրքական հակամարտության ընթացքում զոհվեցին 2 մլն անմեղ հայեր: Ո՞ւր էր համաշխարհային կարծիքն այդ ժամանակ: Իսկ այսօր մենք բազմիցս ազդարարում եւ վարչակարգերին զգուշացնում ենք, որ հեռու մնան թուրքական բոլոր հատատություններից ու ֆաշիստական Թուրքիայի հետ խզեն ամեն մի կապ՝ իրենց խաղաքացիների կյանքն առաջնորդելու համար: Սակայն, դժբախտաբար, վարչակարգերը կարեւորություն չեն տալիս մեր հայտարարություններին: Աշխարհի տեղեկատվական շրջանակները շատ լավ գիտեն, որ 1983 թ. հուլիսի 13-ին մենք հաղորդագրություն հրապարակեցինք Աբեյրութում, Փարիզում, Կիպրոսում եւ Բելգիայում՝ վերահաստատելով թուրքական հատատություններից հետո մնալու հրամայականը, շեշտելով, որ թուրքական հատատությունները այսուհետ մեր օպերատիվ խնդիրն են: Եվ մեր այս ազդարարությունից 24 ժամ հետո տեղի ունեցավ Օռլի օդանավակայանի գործողությունը, որը կենսական կարեւոր նշանակություն ուներ: 7 զոհվածների բվում էր Ֆրանկո-թուրքական խաղաքականության առաջատար անձնավորություններից մեկը: Նա դեկավարում էր Թուրքիայում եւ Եվրոպայի տարածքում տուրիստական շրջագայություններ կազմակերպող ճամփորդական մի ընկերություն, որի կենտրոնատեղին Փարիզն է:

Միդլ Իսթ– Արեւմտյան տեղեկատվական աղբյուրները խոսում են նաեւ Հայ գաղտնի բանակի ներսում ծագած բաժանումների եւ տարակարծությունների մասին: Ո՞րն է իրականությունը:

Միհրան Միհրանյան– Մեր գրույցի սկզբում ես նշեցի տեղեկատվական նշված աղբյուրների խաղացած խիստ կասկածելի դերը՝ իրականությունը խեղաթյուրելու նրանց փորձերի մասին: «Բաժանումների» մասին լուրերն էլ որեւէ հիմք չունեն: Այս տարածայնությունները պատրաստվում են ֆրանսիական լրտեսական սպատարկությունների եւ հայ մի քանի գործակալների կողմից, որոնք կարողացել են թափանցել մեր կազմակերպություն: Այս վերջինները փոխանցում էին նաեւ անճշտ տեղեկություններ: Նրանք, համագործակցելով թուրք լրտեսների հետ, կարողացան 1983 թ. հուլիսի 15-ին եւ 16-ին Բեյրութում սպանել Կենտրոնական կոմիտեի մեր երկու ընկերներին: Այս ոճիրն իրականացվեց էվրենի եւ Թուրքմենի հայտարարություններից իչ հետո: Մեր կազմակերպությունը կարողացավ հայտնաբերել ոճրի հեղինակներին, սակայն նրանցից երկուսը կարողացան փախչել: 1983 թ. օգոստոսի 16-ին գնդակահարեցինք երկու ոճրագործներին, իսկ թուրք գործակալներն այժմ հարցաքննվում են: Արեւմտյան աղբյուրները մեկ տարուց ավելի խոսում են «բաժանումների» մասին, սակայն մենք դրանց որեւէ կարեւորություն չենք տալիս, որովհետեւ անհիմն են: Այս «բաժանումների» եւ անհամաձայնությունների համար իսկապես 1983 թ.-ին դեռեւս անհանգստանալու կարիք չկար:

Ամեն դեպքում «Միդլ Իսթի» թղթակցին հետաքրքրում է, թե ԱՍԱԼԱ-ի ներկայացուցիչն ինչպես է պատկերացնում Հայկական հարցի լուծման ուղիները:

– Հավատում ենք, որ Հայկական հարցի լուծումը կապված է աշխարհատիպ մեր ժողովրդի մղած եւ մղելիք պայքարի, թուրքական ֆաշիստական վարչակարգի կողմից բռնագրավված հայրենիքի ազատագրության հանդեպ նրա ցուցաբերելիք հանձնառության հետ, ասում է Միհրան Միհրանյանը: Սակայն այս մտսեւեռումը, դժբախտաբար, ամբողջական չէ Ամերիկայի, Ֆրանսիայի ու Բրիտանիայի հայահոծ շրջաններում՝ աջ ուժերին եւ կայսերապաշտական ուղղությանը ծառայող արեւմտյան տեղեկատվական կազմակերպությունների խաղացած տխուր դերի պատճառով: Կայսերապաշտության պարտադրած ըմբռնումներից մեր ժողովրդին ձերբազատելու հարցը կենսական նշանակություն ունի պայքարի եւ հեղափոխության երթն արագացնելու համար: Կենսական նշանակություն ունի նաեւ հայ ժողովրդի մերձեցումը Խորհրդային Հայաստանին, բռնագրավված հայրենիքի ազատագրումն ու ժողովրդավար-ընկերվարական իշխանության ստեղծումը Հայաստանում...»:

Համենայնդեպս արժե նշել, որ Օռլիի արյունալի գործողությունից հետո ԱՍԱԼԱ-ն սկսեց բուլանալ, պասակվել: Իր բացասական դերը կատարեց նաեւ ՀՅԴ-ի արյունալի մրցակցությունը գաղտնի բանակի հետ: Կազմակերպությունը 1990 թ.-ից սկսած եւ հատկապես Հայաստանի անկախացումից հետո սկսեց ծեռնպահ մնալ ահաբեկչական գործողություններից: Մարտիկներից շատերն ընդգրկվեցին Արցախյան ազատամարտում, իսկ մյուսներն սկսեցին առավելաբար զբաղվել լրահավաքությամբ եւ հարոչչական գործունեությամբ:

ԱՍԱԼԱ-ի առաջին տարիների գործունեությունը տարաբնույթ մեկնաբանություններ է սացել ոչ միայն օտարների կողմից, այլեւ մեզանում: Բայց անուրանալի է այն դերը, որ խաղաց այս կազմակերպությունը Հայ դատի ներկայացման եւ հետաքրքրման խնդրում: Թղթե շերեփների ժամանակներն անցել էին: Եվ աշխարհի ոչ մի տերություն չէր ցանկանում գոնե ընդունել 20-րդ դարասկզբի ամենամեծ ցեղասպանությունը:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ԱԶԳ

ամբողջական

2000 թ. պետբյուջեի նախագիծն այսօր վերջին ճնշարկումների փուլում է միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ի մասնավորի ՀԲ առաքելության հետ, որից հետո միայն օրենքի այս երկար սպասված նախագիծը կտրվի պատգամավորների դատին: ՀԲ առաքելությունը զուսպ դրական է գնահատում 2000 թ. պետբյուջեի մեր նախագիծը: Հուսադրող գնահատականի հիմքում բյուջեի եկամտային եւ ծախսային մասերի բավականաչափ փոքր աճն է 99 թ. համեմատությամբ: Այս տարի կառավարությունը նախատեսում է օրենքով հավաքել 201,8 մլրդ դրամ եկամուտ՝ ներառյալ նաեւ պատնական տրանսֆերտները: Ծախսերը կազմելու են 253,9 մլրդ դրամ: 99 թ. համեմատությամբ Հայաստանի պետական եկամուտներն աճելու են 3 տոկոսով, իսկ ծախսերը՝ 2,1 տոկոսով: Կառավարությունը փորձում է իրատես լինել՝ ծնելով բյուջետային վերմակը:

Լեւ Ֆրեյնկմանի գլխավորած ՀԲ պատվիրակությունը, որն այս օրերին բանակցում է ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունների հետ, դրական է համարում եկամուտների համեմատ 3 տոկոսանոց աճը՝ ելնելով անցած տարվա Հայաստանի հավաքած եկամուտների չափից, իսկ 99 թ. եկամուտների հավաքագրումը, ինչպես եւ միշտ, թերակատարվել է, թեեւ անցած տարի Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ փորձ կատարվեց բյուջեն սեկվեստրի ենթարկել՝ ցանկալի իրականության հետ համատեղելու ազնիվ մտադրությամբ: 2000 թ. հունվարի 10-ի դրությամբ պետբյուջե է մուտագրվել տարեկան նախատեսված եկամուտների 92,1 տոկոսը՝ 180,6 մլրդ դրամ: Հարկային եկամուտների գծով պետությունը կարողացել է հավաքել 143,6 մլրդ դրամ, այսինքն՝ 99 թ. բյուջեի մասին օրենքով նախատեսվածի 95,2 տոկոսը: Ոչ հարկային եկամուտները կատարվել են 90,6 տոկոսով, այս աղբյուրներից պետությունը կարողացել է հայթայթել 14,09 մլրդ դրամ: Շատ ավելի ազդեցիկ՝ 56,7 տոկոսով թերակատարվել են կապիտալի գործառնություններից ակնկալվող եկամուտները: Հայաստանում կապիտալի շուկա այդպես էլ չի կայանում: Ստացվել է, որ նախատեսված պատնական տրանսֆերտները եւս թերակատարվել են: Հունվարի 10-ի դրությամբ այս գծով բյուջե մուտագրվել է նախատեսվածի ընդամենը 76,4 տոկոսը՝ 12,67 մլրդ դրամ: Թերակատարումների այս շարքն ունի եւ օբյեկտիվ, եւ սուբյեկտիվ պատճառաբանություններ, իսկ ամենաօբյեկտիվը հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունն էր, որն իրապես ցնցումների ենթարկեց Հայաստանի ոչ միայն քաղաքական, այլեւ տնտեսական դաշտը:

Եթե հաշվի առնենք ոչ թե 99 թ. բյուջեի մասին օրենքով սահմանված եկամտային ցուցանիշը, այլ իրական հավաքվածը, ապա կառավարությունը 2000 թ. մտադիր է ավելացնել եկամուտները ոչ թե 3 տոկոսով, այլ գրեթե 5, ինչը ներկայիս պայմաններում կարող է իրատեսական չթվալ: Ուստի Համաշխարհային բանկն այսօր անգամ 3 տոկոս ավել եկամուտներ հավաքելու մեր պետության ներուժը համարում է ռիսկային: ՀԲ պատվիրակությանը ներկա բանակցությունների ընթացքում ամենից շատ մտահոգում է, թե արդյոք պետությունն ունա՞կ է հավաքել 201,8 մլրդ եկամուտ, երբ անցյալ տարի փաստացի հավաքվել է 180,6 մլրդ: Հայաստանյան կառավարությունը վճռական է պնդելով, թե հավաքելու ներուժ ունի: Յուրաքանչյուր կառավարության խնդիրն է պնդել իր հնարավորությունների առավելագույնը, որպեսզի միջազգային կազմակերպություններից էլ կարողանա ձեռք բերել առավելագույն օգնություն փակելու բյուջեի պակասորդը, որն այս տարի կազմելու է 52 մլրդ դրամ:

ՀԲ-ն գերի է ՀՀ բյուջեի նախագծին

ՀԲ հայաստանյան գրասենյակի ղեկավար Օուեյս Սաադաքն իր վերջին ասուլիսում հումորով արձանագրեց, որ իրենց կառուցվածքային բարեփոխումների SAC-4 վարկը գերի է մեր բյուջեի նախագծին, որը անընդհատ փոփոխվում է՝ ծիշտ է, նվազման միտումներով: Բացի այդ՝ միջազգային կազմակերպությունները փորձում են Հայաստանի կառավարությանը համոզել, որ իրենց տրամադրած վարկերը չօդղեն միայն բյուջեի պակասորդի ծածկմանը, ընթացիկ ծախսերի բավարարմանը, այլ տրված գումարներով իրականացնեն կառուցվածքային բարեփոխումներ տնտեսության եւ դրամավարկային ոլորտում, սակայն ավանդաբար նման վարկերը ծառայում են եկամուտների եւ ծախսերի միջեւ առաջացած խզումների հաղթահարմանը, եւ այս տեսակետից Հայաստանը բացառություն չէ: Բյուջեի մասին օրենքով սահմանված եւ հավաքման ենթակա գումարի ցուցանիշը միշտ էլ տարբերվում է իրականում հավաքվող թվից, որման էլ տարեցտարի խոսվում է հարկային վարչարարության բարելավման, հարկային դաշտի ընդլայնման մասին, այնուհանդերձ միշտ էլ թերակատարումներն անխուսափելի են, ընդ որում միջազգային կազմակերպությունները, նաեւ հայրենական հարկատուների օրինակով հաճախ նահանջում են իրենց պատասխանատվության բեռից: Տարբեր պետություններից եւ անգամ ՄԱՀ-ից ու ՀԲ-ից սպասվող դրամաշնորհները, տրանսֆերտներն ու վարկային միջոցները հաճախ թերակատարվում են: Այսպես, ՀԲ-ն Հայաստանին անցած շաբաթ ուղացումով վճարեց SAC-3 վարկի վերջին չափաբաժինը, ավելին՝ նախատեսված 25 մլն դոլարի փոխարեն մեզ տացան 20 մլն: Որպես սփոփանք՝ ՀԲ-ն խոստանում է այդ 5 մլն դոլարը մեզ հատկացնել 2000 թ. SAC-4 վարկի շրջանակում, այսինքն՝ 40 մլնի փոխարեն մեզ կտանանք 45 մլն դոլար:

Պետության հույսը, այսպիսով, դարձյալ սեփական հարկային մարմիններն են եւ հայրենական հարկատուները, որոնց միջեւ կառուցողական հարաբերություններ հաստատելու դեպքում է, որ 2000 թ. ուղացող բյուջեն զուսպ դրական կգնահատվի ոչ միայն միջազգային կազմակերպությունների, այլեւ բնակչության կողմից, ինչը քաղաքական կայունության տես ավելի կարեւոր գործոն է, քան քաղաքական կուսակցությունների կամ գործիչների հայտարարությունները ու դիրքորոշումները:

ՆԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՊՀ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

Քոչարյանի հրաժարականի վերաբերյալ լուրերը չեն հետաքրքրում Ալիեւին

ԲԱԿՈՒ, 26 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. ԱՊՀ-ի մոսկովյան գագաթաժողովը ցուցադրեց Ռուսաստանի եւ Հարավային Կովկասի երկրների փոխադարձ շահագրգռվածությունը՝ զարգացնելու միջպետական հարաբերությունները եւ տնտեսական համագործակցությունը, ըստ ՓՐԱՅՄ ՆՅՈՒՍԻ, երեքշաբթի ուշ երեկոյան Մոսկվայից Բաքու վերադառնալուց հետո հայտարարել է Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը:

Ռուսաստանի եւ Հարավային Կովկասի պետությունների միջեւ կապերի ամրապնդումը տարածաշրջանի կայունության ու խաղաղության ամենալավ երաշխիքն է, ասել է Ադրբեջանի նախագահը: Հեյդար Ալիեւը դրականորեն է գնահատել Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ Մոսկվայում կայացած հանդիպումը, որն ընթացել է Ռուսաստանի նախագահի պատասխանատու Վլադիմիր Պուտինի մասնակցությամբ: Այդ հանդիպմանը ճշտարկվել է դարաբաղյան խնդրի կարգավորման հարցը:

Նախագահ Ալիեւը նշել է, որ նա վստահ չէ Հայաստանի նախագահի պատասխանից Ռոբերտ Քոչարյանի առաջիկա հրաժարականի մասին լուրերի իրական լինելուն եւ «այնքան էլ չի խորանում այդ թեմայով տարբեր հրապարակումների մեջ»:

Պուտինը նախազգուշացրել է Ադրկոմկասի ղեկավարներին

ՄՈՍԿՎԱ, 26 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՓՐԱՅՄ ՆՅՈՒՍ: Ռուսաստանի նախագահի պատասխանատու Վլադիմիր Պուտինն Անդրկովկասի պետությունների ղեկավարների հետ կայացած հանդիպման ժամանակ «պարզորոշ ակնարկել է» հնարավոր հետեւանքների մասին այն դեպքում, եթե այս երկրներում հաշվի չառնեն Չեչնիայում Մոսկվայի շահերը, չորեքշաբթի օրը հաղորդել է Մոսկվայի «Սեգոդնյա» ազդեցիկ թերթը:

Ըստ թերթի տեղեկատվության, որպես հնարավոր «հետեւանքներ» կարելի է համարել Վրաստանի եւ Ադրբեջանի հետ անցագրային ռեժիմի սահմանումը, Ռուսաստանի դիրքորոշման խստացումը աբխազական հիմնախնդրի շուրջ եւ նույնիսկ տնտեսական շրջափակումը:

Պուտինի նախազգուշացումները զգուշացիցները, կարելի է ենթադրել, ընդունել են ի գիտություն, գնում է թերթը: Թեկուզեւ այն պատճառով, օրինակ, որ, ինչպես «Սեգոդնյա» թերթին հաղորդել են ՌԴ արտգործնախարարությունում, Ռուսաստանում ապրող վրացի քաղաքացիների դրամական առաքումների տարեկան ծավալը ութաթասիկ գերազանցում է Վրաստանի էկոնոմիկայում օտարերկրյա ներդրումների չափին:

ԲԱԿՈՒ

Ադրբեջանում էլեկտրաէներգիայի խստիվ խնայողության ռեժիմ

ԲԱԿՈՒ, 26 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մինչեւ գարնան սկսվելը «Ազերէներժի» բաժնետիրական ընկերությունը երկրի ամբողջ էներգետիկ ցանցը փոխադրում է խնայողության խիստ ռեժիմի:

Ինչպես Փրայմ Նյուսի թղթակցին հաղորդել է «Ազերէներժիի» նախագահ Մուսլում Իմանովը, այսուհետեւ նավթով հարուստ հանրապետության բնակչությունն օրական առնվազն 12 ժամ էլեկտրաէներգիա չի ստանա:

Առանձնապես խիստ ռեժիմ է մտցվում երկրի մայրաքաղաքում: Գիշերվա ժամը 1-ից մինչեւ առավոտյան ժամը 7-ը Բաքվում դադարեցված են բոլոր հեռուստատեսային հեռարձակումները: Օրվա կեսին՝ ժամը 12-17-ը էլեկտրաէներգիայի մատուցումը դադարեցվում է ամենուրեք:

Բնակչությանը հանձնարարվում է չօգտվել էլեկտրասպասքից սարքերից, քանի Բաքվում ներկայումս փողոցում ջերմությունը զրոյից ցածր է, իսկ կենտրոնական ջեռուցումն այստեղ չի գործում արդեն 10 տարի:

Միեւնույն ժամանակ հայտարարված է, որ ծեռնարկվող սահմանափակումները չեն տարածվի Բաքվի կենտրոնական մասը, որտեղ հիմնականում բնակվում է ղեկավարող ընտրախավը:

«Ազերէներժիում» էներգետիկայի ոլորտում ստեղծված իրավիճակը բացատրում են ջերմաէլեկտրակայաններում էլեկտրաէներգիայի արտադրման համար օգտագործվող մազութի պակասությամբ եւ այն բանով, որ սպառողները ժամանակին չեն վճարում օգտագործված էլեկտրաէներգիայի վարձը:

Սակայն, Բաքվի անկախ տնտեսագետները իշխանություններին մեղադրում են այն բանում, որ «Ազերէներժին», լինելով մենաշնորհ ծեռնարկություն, ինքն է ներքաշվել էլեկտրաէներգիայի զանգվածային հափշտակման համակարգի մեջ եւ պնդում է, որ այդ ծյուղն անհապաղ մասնավորեցվի:

Թմրամոլություն. Հոլանդիան այլեւս չի դատապարտվում

Թմրադեղերի հարցում Հոլանդիայի բռնած գերազանական դիրքը տարիներ շարունակ ննջադավել է, բայց վերջին ամիսներին եվրոպական որոշ երկրներ ոչ միայն մեղմացրել են ճնշադատությունը, այլեւ սկսել են յուրովի փոխ առնել հոլանդացիների փորձը:

Հակաթմրադեղային պայքարում Հոլանդիայի քաղաքականությունը ենթադրում է որոշակի ներողամտություն թմրամոլների հանդեպ. թմրամոլը համարվում է ոչ թե հանցագործ, այլ հիվանդ: Ըստ այդմ շեշտը դրվում է թմրամոլության բոլոր ձեւերի (ալկոհոլամոլություն, հաշիշամոլություն, կոկաինամոլություն, ծխախոտամոլություն, հանգստացուցիչ դեղամիջոցների չարաշահում) կանխարգելման վրա:

1999 թ. դեկտեմբերի 10-ին Ֆրանսիայի վարչապետ Լիոնել Ժոսպենի հովանավորությամբ Սորբոնի համալսարանում անցկացվեց «Իմանալ ավելին, նվազեցնել վնասը» թեմայով գիտաժողով, որին մասնակցում էին գիտնականներ, իրավաբաններ, հասարակագետներ: Ինչպես հայտարարեց գիտաժողովի կազմակերպիչը՝ հակաթմրադեղային պայքարի միջազգային կազմակերպությունները փորձում են Հայաստանի կառավարությանը համոզել, որ իրենց տրամադրած վարկերը չօդղեն միայն բյուջեի պակասորդի ծածկմանը, ընթացիկ ծախսերի բավարարմանը, այլ տրված գումարներով իրականացնեն կառուցվածքային բարեփոխումներ տնտեսության եւ դրամավարկային ոլորտում, սակայն ավանդաբար նման վարկերը ծառայում են եկամուտների եւ ծախսերի միջեւ առաջացած խզումների հաղթահարմանը, եւ այս տեսակետից Հայաստանը բացառություն չէ: Բյուջեի մասին օրենքով սահմանված եւ հավաքման ենթակա գումարի ցուցանիշը միշտ էլ տարբերվում է իրականում հավաքվող թվից, որման էլ տարեցտարի խոսվում է հարկային վարչարարության բարելավման, հարկային դաշտի ընդլայնման մասին, այնուհանդերձ միշտ էլ թերակատարումներն անխուսափելի են, ընդ որում միջազգային կազմակերպությունները, նաեւ հայրենական հարկատուների օրինակով հաճախ նահանջում են իրենց պատասխանատվության բեռից: Տարբեր պետություններից եւ անգամ ՄԱՀ-ից ու ՀԲ-ից սպասվող դրամաշնորհները, տրանսֆերտներն ու վարկային միջոցները հաճախ թերակատարվում են: Այսպես, ՀԲ-ն Հայաստանին անցած շաբաթ ուղացումով վճարեց SAC-3 վարկի վերջին չափաբաժինը, ավելին՝ նախատեսված 25 մլն դոլարի փոխարեն մեզ տացան 20 մլն: Որպես սփոփանք՝ ՀԲ-ն խոստանում է այդ 5 մլն դոլարը մեզ հատկացնել 2000 թ. SAC-4 վարկի շրջանակում, այսինքն՝ 40 մլնի փոխարեն մեզ կտանանք 45 մլն դոլար:

Պետության հույսը, այսպիսով, դարձյալ սեփական հարկային մարմիններն են եւ հայրենական հարկատուները, որոնց միջեւ կառուցողական հարաբերություններ հաստատելու դեպքում է, որ 2000 թ. ուղացող բյուջեն զուսպ դրական կգնահատվի ոչ միայն միջազգային կազմակերպությունների, այլեւ բնակչության կողմից, ինչը քաղաքական կայունության տես ավելի կարեւոր գործոն է, քան քաղաքական կուսակցությունների կամ գործիչների հայտարարությունները ու դիրքորոշումները:

ՆԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Թմրադեղերի հարցում Հոլանդիայի բռնած գերազանական դիրքը տարիներ շարունակ ննջադավել է, բայց վերջին ամիսներին եվրոպական որոշ երկրներ ոչ միայն մեղմացրել են ճնշադատությունը, այլեւ սկսել են յուրովի փոխ առնել հոլանդացիների փորձը:

Հակաթմրադեղային պայքարում Հոլանդիայի քաղաքականությունը ենթադրում է որոշակի ներողամտություն թմրամոլների հանդեպ. թմրամոլը համարվում է ոչ թե հանցագործ, այլ հիվանդ: Ըստ այդմ շեշտը դրվում է թմրամոլության բոլոր ձեւերի (ալկոհոլամոլություն, հաշիշամոլություն, կոկաինամոլություն, ծխախոտամոլություն, հանգստացուցիչ դեղամիջոցների չարաշահում) կանխարգելման վրա:

1999 թ. դեկտեմբերի 10-ին Ֆրանսիայի վարչապետ Լիոնել Ժոսպենի հովանավորությամբ Սորբոնի համալսարանում անցկացվեց «Իմանալ ավելին, նվազեցնել վնասը» թեմայով գիտաժողով, որին մասնակցում էին գիտնականներ, իրավաբաններ, հասարակագետներ: Ինչպես հայտարարեց գիտաժողովի կազմակերպիչը՝ հակաթմրադեղային պայքարի միջազգային կազմակերպությունները փորձում են Հայաստանի կառավարությանը համոզել, որ իրենց տրամադրած վարկերը չօդղեն միայն բյուջեի պակասորդի ծածկմանը, ընթացիկ ծախսերի բավարարմանը, այլ տրված գումարներով իրականացնեն կառուցվածքային բարեփոխումներ տնտեսության եւ դրամավարկային ոլորտում, սակայն ավանդաբար նման վարկերը ծառայում են եկամուտների եւ ծախսերի միջեւ առաջացած խզումների հաղթահարմանը, եւ այս տեսակետից Հայաստանը բացառություն չէ: Բյուջեի մասին օրենքով սահմանված եւ հավաքման ենթակա գումարի ցուցանիշը միշտ էլ տարբերվում է իրականում հավաքվող թվից, որման էլ տարեցտարի խոսվում է հարկային վարչարարության բարելավման, հարկային դաշտի ընդլայնման մասին, այնուհանդերձ միշտ էլ թերակատարումներն անխուսափելի են, ընդ որում միջազգային կազմակերպությունները, նաեւ հայրենական հարկատուների օրինակով հաճախ նահանջում են իրենց պատասխանատվության բեռից: Տարբեր պետություններից եւ անգամ ՄԱՀ-ից ու ՀԲ-ից սպասվող դրամաշնորհները, տրանսֆերտներն ու վարկային միջոցները հաճախ թերակատարվում են: Այսպես, ՀԲ-ն Հայաստանին անցած շաբաթ ուղացումով վճարեց SAC-3 վարկի վերջին չափաբաժինը, ավելին՝ նախատեսված 25 մլն դոլարի փոխարեն մեզ տացան 20 մլն: Որպես սփոփանք՝ ՀԲ-ն խոստանում է այդ 5 մլն դոլարը մեզ հատկացնել 2000 թ. SAC-4 վարկի շրջանակում, այսինքն՝ 40 մլնի փոխարեն մեզ կտանանք 45 մլն դոլար:

Պետության հույսը, այսպիսով, դարձյալ սեփական հարկային մարմիններն են եւ հայրենական հարկատուները, որոնց միջեւ կառուցողական հարաբերություններ հաստատելու դեպքում է, որ 2000 թ. ուղացող բյուջեն զուսպ դրական կգնահատվի ոչ միայն միջազգային կազմակերպությունների, այլեւ բնակչության կողմից, ինչը քաղաքական կայունության տես ավելի կարեւոր գործոն է, քան քաղաքական կուսակցությունների կամ գործիչների հայտարարությունները ու դիրքորոշումները:

ՆԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Մշակույթ

Այդ ցավոտ ու խոցր վերադարձը

Նինա Աղավելյանը ծանոթ անուն է արվեստագիտական շրջանակներում: Մասնագիտությամբ փիլիսոփա նա 80-ականներին հանդես եկավ արդեն որոշ արհեստավարժ նկարիչ, մի շարք անհատական ցուցահանդեսների հեղինակ: Սույն զրույցի նյութը թեպետ կենտրոնանում է ոչ այնքան Աղավելյան-նկարչի, որքան այսօրվա հայ արվեստագետի որոշ հավաքական կերպարի, ճակատագրի:

– Ենինա, այսօր ցավով ոմիսի արձանագրենք, որ Հայաստանից ավելի շատ հեռանում են, քան վերադառնում: Այնուամենայնիվ, մի քանի տարի բնակվելով արվեստագետի նկատմամբ չափազանց բարեհաճ մի երկրում՝ Գերմանիայում, վերադարձար հայրենիք:

– Ճիշտ է, ոմիսի դասճառաբանե՞մ ինչու հեռացա եւ ինչու վերադարձա: Հեռացա որոշ մի դասճառով, որը շատ-շատերին, ոչ միայն արվեստագետներին է սիրում թողնել հայրենիքը. այստեղ այլեւս անհնար էր դարձել աղրելը, էլ չեմ խոսում ստեղծագործելու մասին: Նյութական նեղություններ, ճնշվածություն... Յուրաքանչյուրս էլ այս տարիներին աղրել է դրանցով թելադրված անելանելիության զգացումը: Մի դահ, երբ զգացի, որ կենցաղային հոգսերն արդեն սպանում են ստեղծագործականը, ասես կորցրի հենարանս: Ու որոշեցի փրկել կյանքիս գործը՝ նկարչությունը: Գերմանիայում առաջին անգամը չէի տարիներ առաջ այցելել էի մեկ ամսով՝ աշխատանքներիս անհատական եւ համատեղ ցուցահանդեսներին ներկա գտնվելու: Այս անգամ էլ մեկնելով չգիտեի, որ վերադարձս այդքան կերկարածգվի... Սակայն գիտակցված կերպով վերադարձիս միջոցներն էի հայթայթում, քանի որ... Յուրաքանչյուր ստեղծագործող էլ ինձ կհասկանա. երկրիդ դուրս մուսադ էլ հանգչում է: Լիարժեք, անկեղծ ստեղծագործել կարող ես միայն հայրենիքում:

– Ակամա հիշեցի մեր հանրահայտ երաժշտահան Ավետ Տերտերյանին, որը հայրենիքից դուրս նույն հոգեվիճակն արդելով՝ իր ստեղծագործական ժամանակավոր «անդոնությունը» բնորոշել էր՝ «ինչպես մուսան ոսկե վանդակում»...

– Իրոք, այդպես է: Չեմ կարող ասել, թե վրձինս լիովին «կարկամած» էր, թե առհասարակ չէի ստեղծագործում: Ընդհակառակը, նկարում էի. նկարում էի շատ ու գրեթե մեթենայաբար, քանի որ օսարության մեջ ինձ նախ եւ առաջ իմնահատակվել եւ արդուստ հայթայթել էր պետք: Ի վերջո, կասեմ, արվեստագետին էլ ի՞նչ է հարկավոր մի խաղաղ պենյունում ստեղծագործելու հնարավորությունից բացի: Սակայն նկարներումս հոգի չկար. սոսկ արհեստավարժություն էր, ձեռքի սովորույթ: Հոգիս ասես քողել էի Հայաստանում անհուսության, անհեռանկարայնության եւ, միաժամանակ, հոգեհարազատության տարերքում: Իսկ արտադուստ նույն հոգսերն էին, որոնք ծառանում են յուրաքանչյուր «գաղթածի» առջեւ լեզվական պատնեշը հաղթահարել, օտարազգի գործընկերներիդ շրջապատում կարեր հաստատել, յուրացնել այդ ազգի առանձնահատկությունները եւ այլն:

Բարեբախտաբար, այնպիսի երկրում էի, ուր մարդիկ օժտված են գեղեցիկը գնահատելու բացառիկ ունակությամբ եւ անտարբեր չանցան կտավներիս կողով: Այն ժամանակ ստեղծագործելու ընթացքում, ի վերջո, պարզվում են, իսկ ավարտից հետո անմիջապես էլ մոռացվում: Այնինչ ոո բացատրության ավելի պարզ բացատրությունն այն է, որ արվեստագետը չի կարող խորն արդումներ ունենալ ու արժեքներ ստեղծել, եթե կտրված է հայրենի արմատներից: Այո, այստեղ ամենը ծանր է թվում եւ հուսահատեցնող, սակայն սա է մերը, սեփական ցավից ո՞ւր փախչես: Այսօր ավելի, քան երբեւէ, հաջողություն ունեմ վրձին վերցնելու եւ վերստին ստեղծագործելու: Հասկանում եմ, որ նկարիչների միությունում էլ կյանքը կանգ չի առել, եւ մեծ թվով ցուցահանդեսներ են կազմակերպվում:

– Պիտի խոստովանենք, որ ստեղծագործելու հաջողություն այսօր, հիրավի, էլերն ունեն: Արվեստագետներից ոմանք նախընտրում են պարզապես արդել ու աշխատել՝ ստեղծագործականում այլեւս չտեսնելով իմաստ ու գնահատվածություն: Ոմանք էլ ներփակվել են իրենց «կաղապարներում»՝ հանդիսատեսի հետ երկխոսությունը կորցնելով:

– Չստեղծագործել չեմ կարող, անգամ՝ եթե, ինչպես ասացիր, իմաստ ու գնահատվածություն չկա: Թերեւս, ոգու հավերժական պահանջն է ինքնարտահայտվել ու ինքնարտահայտվել... Սակայն ստեղծագործական ընթացքն էլ ոմիսի ինքնաբուսական չդառնա, այլապես արվեստի որոշ արժեքի, չափը գործերումդ տեղատվություն կարդի: Ի վերջո, կարգախոսը պարզ է. ստեղծագործում ես ապագայի համար եւ ոչ այսօրվա: Մեկ օրվա համար, մեկ օրվա փրկությանը, ինքնամխիթարանքին կամ ըուկային ծառայող արվեստը երկար չի ապրի: Ստեղծագործականը վաստեսության ինքնին մերժում է: Այսօր ցուցահանդես կազմակերպելու հնարավորություն չունեմ, վաղը, թերեւս, կունենամ:

Մեր պայմանները ծանրութեթեւ անելով մեղադրել էլ չես կարող, որ նման բուռն ծաղկում է ապրում ըուկայական արվեստը. ոչ մեղադրել, ոչ էլ արդարացնել: Իրոք, դժվար է ստեղծագործելը մի երկրում, ուր սիրված ես ինքնուրույն հոգալ ոչ միայն, օրինակ, նկարչական կարիքներդ, այլեւ նկարածդ ցուցադրելու: Մեր խեղճության գիտակցումն անսահման է, սակայն եթե տրվեմ այդ տրամադրությանը, առհասարակ չեմ կարող նկարել...

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

«Գիրք-2000» համահայկական ցուցահանդես-տոնավաճառ

«Հրատարակիչների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ «Ավասա» գրասենը բացվեց «Գիրք-2000» համահայկական առաջին ցուցահանդես-տոնավաճառը Բաց հրատարակական ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հովանավորությամբ:

Ցուցահանդեսին մասնակցում են հանրադետությունում գործող ավելի քան 50 հրատարակչատներ («Ամրոց», «Նաիրի», «Հայաստան», «Սարգիս Խաչենց», «Մխիթար Գոշ», «Վան Արյան», «Հայկական հանրագիտարան», «Գիտություն» եւ այլն), որոնք ներկայացրել են 1998-1999 թվականներին հրատարակված ժամանակակից հայրենի եւ սփյուռքահայ հեղինակների շուրջ 1000 անուն գրքեր:

21-րդ դարի ու 3-րդ հազարամյակի շեմին գրքի համահայկական տոնահանդեսի կազմակերպումը, անշուշտ, մեծագույն խորհուրդ ունի, ասաց ասոցիացիայի նախագահ Վահան Խաչատրյանը: Վերջին տասնամյակում գրահրատարակչական գործը մեզանում լուրջ փորձությունների է ենթարկվել, սակայն այսօրվա ցուցահանդեսը վկայությունն է այն բանի, որ հայ գիրքը վերստին ծաղկում է եւ հայրենիքում, եւ սփյուռքում: Հենց անցյալ տարի մեր մի շարք գրքեր ներկայացվել են համաշխարհային ցուցահանդեսներում (Ֆրանկֆուրտ, Լայպցիգ, Մոսկվա), հաջող ճնշություն թողնելով, շահել մրցանակներ: Սփյուռքահայ հեղինակների (ԱՄՆ, Լիբանան, Գերմանիա, Վրաստան եւ այլն) գործերի ծեռքբերմանն օժանդակել է 33 արտգործնախարարությունը:

Այցելուների հետաքրքրությանն արժանացան «Գիտություն», «Հայկական հանրագիտարան», «Տիգրան Մեծ», «Ամրոց» եւ այլ հրատարակչատների լույս ընծայած գիտաղատական, հանրագիտարանային հիմնարար աշխատությունները, բառարաններ, դասական եւ ժամանակակից հայ գրողների ստեղծագործություններ, մանկապատանեկան գեղարվեստական գրականություն, պատկերագրեր, ռեֆերատական, գրական եւ այլ մրցանակների արժանացած գրքեր:

Ցուցահանդես-վաճառքի ամենասպասված հեղինակը 90-ամյա ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանն է, որի վերջին աշխատանքներից ներկայացվել են մի քանիսը տարբեր հրատարակություններով:

Ամենայրես

ԱՍՈՑԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Նոր դարը մանուկների աչքերով

Օրերս Աբովյան քաղաքի երկրագիտական թանգարանում բացվեց նկարիչ Ժորա Բարսեղյանի ստուդիայի սաների նկարների դարավերջին նվիրված եզրափակիչ ցուցահանդեսը: Ի տարբերություն իրենց հասակակիցների աշխատանքների, 6-16 տարեկան 22 տաների նկարներն առաջին հայացից բոլորովին է մանկական ստեղծագործություններ չեն հիշեցնում: Թվում է՝ հասուն, կյանքի փորձով իմաստնացած նկարիչների վրձնահարվածներ են, որոնք նախ պատկերել են վերջին աշունը, հետո մոլորակի վեցմիլիարդերորդ բնակչին, յուրովի բնորոշել 2000 թվականը, գծել դեպի առագա տանող ճանապարհը, վրձնել... «Նոր դարը», որն էլ հենց ցուցահանդեսի խորագիրն էր:

Ժ. Բարսեղյանի հավաստմամբ ստուդիայում երեխաների ունակությունները կատարելագործվում են՝ չխաթարելով նրանց հոգեբանական անդորրն ու ծեռագիրը: Այսինքն՝ սաների մտի ալացը, երեւակայությունը ստանդարտների ու ըրջանակների մեջ չեն դրվում: Միգուցե հենց այս է որոշ պատանի նկարիչների անդրանիկ հաջողությունների գրավականը:

Հոկտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Հայաստանի երիտասարդական միության կազմակերպած մանկական նկարների մրցույթին ողջ Հայաստանից ներկայացված 400 աշխատանքներից ընտրվել է 12 նկար, որից երկուսի հեղինակները Ժ. Բարսեղյանի ստուդիայի սաներն են՝ 6-ամյա Նարեկ Իգիթյանը եւ 16-ամյա Նարինե Ղուկասյանը: Ամերիկա ուղարկված մյուս ընտրյալ աշխատանքների հետ նրանց ստեղծագործություններն արդեն տպագրվում եւ տարածվում են:

«Ձեր հաղթանակը նաեւ մեր քաղաքի հաղթանակն է, խորացեք արվեստի մեջ եւ ջանացեք հետ չմնալ Ձեր ուսուցչից», ցուցահանդեսի բացման խոսքում ասաց Աբովյանի քաղաքապետ Կ. Իսրայելյանը եւ երկու մրցանակակիրներին հանձնեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի դիպլոմներն ու քաղաքապետարանի պատվոգրերը:

20-րդ դարի վերջը նկարիչների համար ոգեկոչման աղբյուր է եղել: Իսկ փորձիկ նկարիչների նկարներում նոր դարը, բարեբախտաբար, պայծառ ու խաղաղ է...

ԼԻԱՆԱ ԲՈՒԼԻՒԱՑՅԱՆ

ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԻՆՈ

Սիրի՛ր, սիրիր հավերժ

Սոպասիր, ես կգամ... բայց միայն ներկայացումից հետո, կգամ ու կսիրեմ ձեզ, սիրելի Ռաֆել (Ինգրիդա Տոզինա): Դա ասում է Հենրին (էռլանդ Յուսեֆսոն), որը մի ժամանակ սիրում էր նրան, բայց մի՞թե դա սեր է եղել, ո՛չ, նա Ռաֆելի երիտասարդությունն է սիրել, սիրել է մարմինը նրա անբիծ: Սակայն այդ կնոջը մենք տեսնում ենք խելագարի կարգավիճակով, որն այդ պահին ավելի շատ կարիք ունի սիրո եւ ինքնաճի, քան իր դուստր Աննան (Լենա Ռոլինա), որը միգուցե դառնա Հենրիի սիրուհին:

Լռություն է տիրում, միայն նա՝ այդ տղամարդն է սենյակում, եւ այդ լռությունը մենք լցնում ենք իրատեսական մտքերով: Գալիս է Աննան, նա փնտրում է իր չկորած թեւնոցը, այո՛, չկորած, դա նրա համար պատրվակ էր, որ նորից վերադառնա այն սենյակը, ուր գտնվում է նաեւ Հենրին: Աննան ցանկանում է դառնալ հայտնի դերասանուհի եւ պատրաստ է ամբողջ օրը մնալ այստեղ՝ փորձերի, որը նաեւ պատճառ է լինել Հենրիի կողմից:

Ես հասկանում եմ ձեզ... եւ ձեզ նույնպես... չեմ հասկանում ինձ... ի՞նչ եմ ուզում ես:

Գիտե՞ս, ես եմ գլխավոր դերակատարը, բայց արդյոք կկարողանա՞մ այն ճիշտ խաղալ... չէ՞ որ ես փորձ եմ այդ դերի համար: ...Իսկ դու փորձիր խաղալ, մտիր այդ դերի մեջ, փակիր աչքերդ, կանգնիր, պատկերացրու, որ հաշմանդամ ես, բացիր աչքերդ... ի՞նչ ես զգում:

Աննա, դու շատ փորձ ես, բայց ոո մեջ տեսանելի եղավ հատուցված կնոջ պատկեր, դու ոո հայացքներով ցանկանում էիր ներթափանցել տղամարդու աչքերի խորքը, մտնել նրանց մեջ, եւ ցույց տալ, որ դու կին ես եւ ոչ փորձիկ աղջնակ: Դերերը փոխվել են՝ նորաբողբոջ այդ աղջնակը խլել էր մորից մեծ դերը եւ նրան թողել փորձիկ, շատ փորձիկ մի դեր: ...Ես կարող եմ խաղալ գլխավոր դերը, ինձ տվեք այն, խնդրում էր Ռաֆելը, դուէ ուզում եք խլել ինձնից իմ տաղանդը, կարծում եք, կմեռնի այն իմ մեջ, ո՛չ, իսկ դո՞ւ, ունկնդիր, ի՞նչ ես մտածում, խելագարը կարո՞ղ է այդքան ուժեղ լինել, ուժեղ, երբ հրել են նրան, գցել ու ծեռացրել են նրան:

Մարդիկ կարող են ինձ հետ անել այն... ինչ ցանկանան... իսկ ես... արի սիրով զբաղվենք, հիշո՞ւմ ես, ինչպես էինք սիրում... իսկ ես հիշում եմ, հը՞ը... դու մոռացել ես: Ես միայնակ եմ, հասկացիր ինձ... արի սիրով զբաղվենք:

Գիտեմ, դու սիրում ես դերասաններին, սիրում ես եւ իմ դերը, ոչինչ, կգա պահը ճշմարտության, դու պատասխան կտաս... մեծ է լինելու ոո դատաստանը: Երիտասարդ եւ ժամանակակից... այս է ոո իդեալը՝ տղամարդ, ծգտում ես նորաբաց ծաղիկներին, խեղճ ծաղիկներ, ինչքան եք երազել անթառամ մնալ, որպեսզի ծեզ չլքեն, որ միշտ ուշադրության կենտրոնում լինեք, բայց, ո՛չ, մեկ է, էլի կլքեն, այնպես որ հաշիվը մեկ է: Մի երազիր, միեւնույն է, երազներդ չեն իրականանալու:

«Ներկայացումից հետո», այս էր կինոնկարի վերնագիրը, իսկ ռեժիսորը հանրաճանաչ Ինգմար Բերգմանն է:

Բերգմանը «Ներկայացումից հետո» ֆիլմում բացահայտորեն ներկայացրել է կյանքի դժվարին պրոբլեմները: Միեւնույն ժամանակ, չի կարելի այն համարել տխուր պատմություն: Դեր ներկայացումից հետո, մի պահ անհեքեթություն, բայց նաեւ մտածելու առիթ է տալիս:

Այս ֆիլմը վեր հանեց խոշոր պրոբլեմներ, ցույց տվեց տխուր եւ ուրախ աշխարհով սերը: Սեր, որ լրել է մեկին եւ հյուր գնացել մյուսին: Սեր... բայց ոչ կայուն, երեւի դա սեր էլ չէ, այլ սահմաններ չունեցող կիրք, որը կարող է մարդուն երջանիկ եւ միաժամանակ դժբախտ դարձնել: Հավատա... եւ չես զղջա... ես ձեզ վաս խորհուրդ երբեք չեմ տա...

ՆԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՕՐՎԱ ՏՈՆԵՐ

Հունվարի 27

- 1756 թ. ծնվել է ավստրիացի կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը, որի անունը համազոր է հանճարեղությանը, իսկ ստեղծագործությունները համարվում են համաշխարհային երաժշտական արվեստի գագաթը:
- 1832 թ. ծնվել է անգլիացի մանկական գրող Լյուիս Քերոլը, որը մաթեմատիկայի պրոֆեսոր էր, լավ նկարում էր, լուսանկարում: Գրողին մեծ հռչակ բերեցին «Ալիսը հրաշքների աշխարհում» եւ «Ալիսը հայելիների աշխարհում» գրքերը:
- 1834 թ. ծնվել է ռուս հիմիկոս Դմիտրի Մենդելեեւը: Նա մի շարք հայտնագործություններ է կատարել եւ շուրջ 500 գիտական աշխատանքների հեղինակ է: Բայց նրա ամենահանճարեղ գործը հիմիական տարրերի պարբերական աղյուսակն է:
- 1891 թ. ծնվել է ռուս գրող Իլյա Էրենբուրգը:
- 900 թ. ծնվել է ռուս գեղջուկ Իվան Իվանով-Վանոն, որը խորհրդանշական պուլտկինոնկարների ստեղծողներից էր եւ հանիցս արժանացել է մրցանակների:
- 1901 թ. մահացել է իտալացի կոմպոզիտոր Ջուզեպե Վերդին, որի ստեղծագործությունները համարվում են համաշխարհային օպերային արվեստի բարձունքը: Հանճարեղ կոմպոզիտորի լավագույն գործերից են «Այդա», «Տրավիատա» եւ այլն:
- Այս օրը հին հայկական տոմարով Արաց ամսվա Վահագն օրն է:

ՆԱՐԻՆԵ ՅԱՂԲԱՏՅԱՆ

ԱԶԳ
Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Հաղթողի կոչման չորս հավակնորդ

«Շիրակը» հրաժեշտ տվեց բարձրագույն խմբին

Մոսկվայում ընթացող Համագործակցության երկրների չեմպիոնների գավաթի 8-րդ խաղարկությունում ավարտվեցին խմբային խաղերը: Որոշվեցին այն չորս թիմերը, որոնք կբարունակեն պայքարը չեմպիոնի կոչման համար: Որոշվեցին նաեւ բարձրագույն խմբին հրաժեշտ տվող, ինչպես նաեւ եկող խաղարկությունում նրանց փոխարինող երկուական թիմերը:

Ցավոք, բարձրագույն խմբին հրաժեշտ տվեց Հայաստանի չեմպիոն «Շիրակը»: Անցյալ տարվա հաջող ելույթներով գյումրեցիների համար տեղ առահովել էր Արարատի «Ցեմենտը», բայց այս անգամ «Շիրակը» չափազանց անհաջող խաղաց: Մեր ընթերցողներն արդեն գիտեն, որ «Բ» ենթախմբում հանդես եկող մեր չեմպիոնը պարտություն էր կրել Լատվիայի չեմպիոն «Սկոնտոյից» (Ռիգա) եւ Ուկրաինայի չեմպիոն «Դինամոյից» (Կիեւ):

Իր վերջին խաղը եւս «Շիրակը» տանուլ տվեց: Բելառուսի չեմպիոն ԲՍՏե (Բորիսով) թիմի հետ հանդիման առաջին խաղակեսը փորձատե հավասար պայմարում ընթացավ: 41-րդ րոպեին Լեոնիդ Լագունը, օգտվելով գյումրեցիների սխալից, բացեց հաշիվը: Հանդիպման երկրորդ խաղակեսում բելառուս ֆուտբոլիստներն ուժեղացրին ճնշումը: Խաղակեսի սկզբում մրցավար Յուրի Բասկակովը «Շիրակի» դարպասին 11 մ տուգանային նշանակեց, բայց Վիտալի Կուտուզովի հարվածը նպատակին չհասավ: 67-րդ րոպեին Ակուլիչը կրկնապատկեց հաշիվը: 5 րոպե անց, հիանալի անցումից հետո, շիրակցի Արթուր Պետրոսյանը կարողացավ կրճատել հաշվի տարբերությունը, բայց սա Հայաստանի չեմպիոնի միակ հաջողությունն էր: Եվգենի Լոբանկովը (76), Ալեքսանդր Երմակովիչը (77) եւ Վիտալի Կուտուզովը (88) եւս երեք անգամ գրավեցին մեր դարպասը եւ իրենց թիմին 5-1 հաշվով հաղթանակ պարգեւեցին: Այսպիսով, «Շիրակն» իր բոլոր խաղերում պարտություն կրեց, ենթախմբում գրավեց վերջին տեղը եւ կորցրեց տեղը բարձրագույն խմբում: Ինչ խոսք, անփառունակ մրցելույթ էր: Սա, իհարկե, պատիվ չի բերում հանրապետության չեմպիոնին, ընդհանրապես հայկական ֆուտբոլին:

Սամուլի ասուլիսներում «Շիրակի» գլխավոր մարզիչ Անդրանիկ Ադամյանը հայտարարում է, որ գավաթի խաղարկության ժամկետները ճիշտ չեն ընտրված, իսկ սինթետիկ ծածկով խաղադաշտում բարձրակարգ ֆուտբոլ ցուցադրել հնարավոր չէ: Հիշեցնենք, որ այս մրցումներն անցկացվում են արդեն 8-րդ անգամ, իսկ ինչ է ժամկետները, պայմանները միթե բոլորի համար նույնը չեն: Իհարկե, առաջին անգամ այս մրցաշարին մասնակցող «Շիրակի» ֆուտբոլիստների համար շատ բան անսովոր էր, բայց ինչո՞վ բացատրել գյումրեցիների կամազուրկ խաղը: Միթե սա է հայկական ֆուտբոլը, նրա այսօրվա մակարդակը:

Մեր խմբի մյուս խաղում Ռիգայի «Սկոնտոն» 5-0 հաշվով հաղթեց Կիեւի «Դինամոյին»: Հաշիվը 16-րդ րոպեին բացեց Օռեստաս Բուռտկուսը, այնուհետեւ այլի ընկավ 19-ամյա Վլադիմիր Կոլեսնիչենկոն, որը 4 անգամ գրավեց ուկրաինացիների դարպասը (40-րդ, 42-րդ, 59-րդ եւ 73-րդ րոպեներին): Հետաքրքիր է, որ Մոսկվայի «Օլիմպիական» մարզադաշտի տրիբունաներում գտնվող ֆուտբոլասերները նորահայտ տաղանդին «Ռիգացի Օուեն» անունով կնքեցին: «Դինամոյի» պարտությունը շատերին անսպասելի կարող է թվալ, բայց ասենք, որ այս թիմը հանդես էր գալիս առանց հիմնական կազմի խաղացողների:

«Ա» խմբում առաջատարը Ռուսաստանի չեմպիոն «Սպարտակը» (Մոսկվա), վերջին խաղում 2-0 հաշվով հետեւությամբ հաղթեց լիտվական «Ժալգիրիսին» (Կաունաս): Գոլերը խփեցին Լուիս Ռոբսոնը (19) եւ Եգոր Տիտովը (35): Մոլդովական «Զիմբրուն» համոզիչ առավելության հասավ «Քյափազի» (Ադրբեջան) նկատմամբ. հաշիվն է 3-0:

«Ա» ենթախումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Սպարտակ	3	3	0	0	11-2	9
2. Զիմբրու	3	2	0	1	6-4	6
3. Ժալգիրիս	3	1	0	2	3-4	3
4. Քյափազ	3	0	0	3	1-11	0

«Բ» ենթախումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Սկոնտո	3	3	0	0	11-2	9
2. ԲՍՏե	3	1	1	1	6-4	4
3. Դինամո	3	1	1	1	1-5	4
4. Շիրակ	3	0	0	3	2-9	0

Այժմ կիսաեզրափակիչ խաղերում կմրցեն «Սպարտակ»-ԲՍՏե եւ «Սկոնտո»-«Զիմբրու» զույգերը: Մասնագետներից շատերը շարունակում են անվանել եզրափակիչի մասնակիցներին: Նրանք ֆավորիտներ են համարում Համագործակցության գավաթի հառակի հաղթող «Սպարտակին» եւ հիանալի խաղ ցույց տվող «Սկոնտոյին»:

Բարձրագույն խմբին, «Շիրակից» բացի, հրաժեշտ տվեց նաեւ «Քյափազը»: Իսկ նրանք, ովքե՞ր կփորձեն եկող տարի կայանալիք խաղարկությունում: Դրանք են Թուրքմենստանի եւ Տաջիկստանի չեմպիոնները: Դա հայտնի դարձավ այն բանից հետո, երբ «C» եւ «D» ենթախմբերում հաղթեցին համապատասխանաբար «Նիսա» (Ազգաբադ) եւ «Վարզոբ» (Դուշանբե) թիմերը:

Ցածր խմբի մրցաշարարներում էլ անակնկալներ եղան: Դրանցից ամենախոշորը Վրաստանի բազմակի չեմպիոն Թբիլիսիի «Դինամոյի» համեմատական անհաջողությունն էր: Այս երիտասարդ, հետանկարային թիմը շատ հետաքրքիր, հարձակողական ֆուտբոլ ցուցադրեց այս մրցումներում, տարավ երկու հաղթանակ, բայց պարտություն կրեց հիմնական մրցակից «Վարզոբից» եւ մեկ միավորով ետ մնաց նրանից:

ՇԱԽՄԱՏ

Կասպարովը՝ միանձնյա առաջատար

Հոլանդիայի Վեյկ ան Զեե քաղաքում անցկացվող ավանդական փառատոնի գլխավոր մրցաշարում անցկացվեցին 9-րդ տուրի պարտիաները:

Երեւանցի Սմբատ Լպուտյանը, սեւ խաղաքարերով հանդիպելով մրցաշարի վերջապահ Լուկ վան Վելիի (Հոլանդիա) հետ, ոչ-ոքի ավարտեց պարտիան: Կեսական միավոր վաստակած հեռացան խաղատախտակից Վլադիմիր Կրամնիկը (Ռուսաստան) եւ Երուն Պիկեսը (Հոլանդիա), Մայել Ադամսը (Անգլիա) եւ Վիշվանաթան Անանդը (Հնդկաստան), Ալեքսանդր Մորոզեւիչը (Ռուսաստան) եւ Նայջել Շորտը (Անգլիա), Հուդիթ Պոլգարը եւ Պետեր Լեկոն (երկուսն էլ՝ Հունգարիա):

Տուրում երկու հաղթանակ գրանցվեց. Պրեդրագ Նիկոլիչը (Բոսնիա) սեւերով պարտության մատնեց Վիկտոր Կորչնոյին (Շվեյցարիա), իսկ Գարրի Կասպարովը (Ռուսաստան) սպիտակներով՝ Յան Թիմանին (Հոլանդիա):

Այս հաղթանակի շնորհիվ Կասպարովը սկսեց միանձնյա գլխավորել մրցաշարային աղյուսակը: Նա 9 հնարավորից 6,5 միավոր է վաստակել: Մյուս մասնակիցների արդյունքներն այսպիսին են. Կրամնիկ՝ 6, Անանդ եւ Լեկո՝ 5,5-ական, Մորոզեւիչ, Ադամս եւ Պիկես՝ 5-ական, Նիկոլիչ՝ 4,5, Թիման եւ Շորտ՝ 4-ական, Լպուտյան՝ 3,5, Կորչնոյ եւ Պոլգար՝ 3-ական, վան Վելի՝ 2,5 միավոր:

10-րդ տուրում կմրցեն Լպուտյան-Ադամս, Նիկոլիչ-Կասպարով, Կրամնիկ-Պոլգար, Անանդ-Մորոզեւիչ, Պիկես-Շորտ, Լեկո-Կորչնոյ, Թիման-վան Վելի զույգերը:

Մինասյանը պոկվում է առաջ

Իսպանական Ուբեդայում անցկացվող միջազգային խոշոր մրցաշարը մոտեցել է ավարտին: Ուրախությամբ տեղեկացնենք, որ երեւանցի գրոսմայստեր Արտաշես Մինասյանն ավելի ամրապնդեց առաջատարի իր դիրքերը: Վերջին երկու տուրերում նա երկու հաղթանակ տարավ: Արտաշեսը նախ պարտության մատնեց Ալեխեյ Հոլմսքենին (Ֆինլանդիա), ապա՝ Ալեքսանդր Գրիշչուկին (Ռուսաստան):

Մինասյանն անցկացրած հանդիպումներից միայն մեկում է ոչ-ոքի խաղացել, իսկ մյուս վեցում հաղթել է մրցակիցներին: Նա 7 հնարավորից վաստակել է 6,5 միավոր եւ միանձնյա գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Մոտակա հետապնդողների խայտակը՝ Զվյագինցեւ, Հոգարդ, Տուրով, Սան Սեգունդո, ես է մնում մեկ միավորով:

Ինչպես հայտնել ենք, Ուբեդայի մրցաշարի 106 մասնակիցների թվում են Հայաստանի 8 ներկայացուցիչներ: Ահա թե մրցումների ավարտից երեք տուր առաջ ինչպիսին են մեր մյուս շախմատիստների արդյունքները. Ալոն Անաստասյան եւ Արա Մինասյան՝ 5-ական, Լեւոն Արոնյան եւ Գաբրիել Սարգսյան՝ 4,5-ական, Նորայր Քալանթարյան եւ Դավիթ Կարապետյան՝ 4-ական, Միհր Հովհաննիսյան՝ 3 միավոր:

ԹԵՆԻՍ

Առջեւում կիսաեզրափակիչ խաղերն են

Մելբուռնում շարունակվում են «Մեծ սաղավարտ» շարքի չորս մրցաշարերից առաջինի՝ Ավստրալիայի բաց առաջնության խաղերը:

Թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց մրցումներում հայտնի են դարձել այն չորսական մասնակիցները, որոնք շարունակում են պայքարը խոշոր մրցանակների համար:

Շատ վստահ է հանդես գալիս աշխարհի թիվ մեկ թենիսիստ Անդրե Աղասին (ԱՄՆ): Քառորդ եզրափակիչում նա ոչ մի հույս չթողեց Հիշամ Արազիին (Մարոկկո)՝ նրան պարտության մատնելով 6-4, 6-4, 6-2 հաշվով: Կիսաեզրափակիչում Աղասին խաղալու է իր հայրենակից եւ վաղեմի մրցակից Փիթ Սամփրասի հետ: Վերջինս հետեւությամբ առավելության հասավ մեկ այլ ամերիկացու՝ Քրիս Վուդրուֆի նկատմամբ՝ 7-5, 6-3, 6-3: Մյուս կիսաեզրափակիչ զույգը կկազմեն եվգենի Կաֆելնիկովը (Ռուսաստան) եւ Մագնուս Նորմանը (Շվեդիա): Քառորդ եզրափակիչ խաղում նրանցից առաջինը հաղթեց Յունես էլ Այնաուիին (Մարոկկո)՝ 6-0, 6-3, 7-6, երկրորդը՝ Նիկոլաս Կիֆերին (Գերմանիա)՝ 3-6, 6-3, 6-1, 7-6:

Ներկայացնենք նաեւ կանանց մրցումների քառորդ եզրափակիչ խաղերի արդյունքները. Մարտինա Հինգիս (Շվեյցարիա)-Արանտա Սանչես-Վիկարիո (Իսպանիա)՝ 6-1, 6-1, Լինդսեյ Դեվենպորտ (ԱՄՆ)-Ժյուլի Ալար (Ֆրանսիա)՝ 6-1, 6-2, Կոնչիտա Մարտինես (Իսպանիա)-Ելենա Լիխովցեւա (Ռուսաստան)՝ 6-3, 4-6, 9-7, Ջենիֆեր Կապրիատի (ԱՄՆ)-Այի Սուգիյամա (Ճապոնիա)՝ 6-0, 6-2:

Կանանց մրցումների ավարտական փուլում եւս չափազանց հետաքրքիր պայքար է սպասվում: Կիսաեզրափակիչում կմրցեն Հինգիս-Մարտինես եւ Դեվենպորտ-Կապրիատի զույգերը:

ԲԱԺՈՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված սկանվորդի պատասխանները

Ուղղահայաց

Սենյակ: Գիտնական: Սեկա: Գոր: Դա: Նուշ: Յակ: «Նինա»: Օբ: Երակ: Արան: Ղարա: Ռուան: Առնո: Գորի: Սեյրան: Կիեւյան: Լանգե: Որիին: Սվին:

Հորիզոնական

Կենի: Դեֆո: Տնակ: Նու: «Ան»: Աշե: Կուկ: Նա: Աղա: Արա: Լառնակա: Ռունգ: Ախեայն=Քեն: Ոլոր: Եւ: Արի: «Արայ»: Վանի: Ամի: Մի: Գիր: Իր: Անան: Են:



Ուղղահայաց

1. Կոկորդիլոսի ցեղ: 2. Քաղաք Բելառուսի Վիտեբսկի մարզում: 3. Սուր վարակիչ հիվանդություն: 4. Պետություն Արեւելյան Աֆրիկայում: 5. Կղզի Մալայան արշիպելագում: 6. Սոհունդ, ...: 9. Հին հունական քաղաք, որն, ըստ ավանդության, հիմնել է Կադմոսը: 10. Փշարմավ, ...: 12. Շիրակ բառի հականիշը: 17. Նավի անձնակազմի անդամ: 18. Արտաշես քաղաքը հիմնադրողը: 19. Մոսկվայի էստրադայի եւ հումորի թատրոնի տարիներ: 21. Կղզի Վանա լճում: 25. Անդրկովկասում եւ Մերձավոր Արեւելքում տարածված բազմալար հարվածվող նվագարան: 26. Հայ գեներալ, Թամանյան դիվիզիայի հրամանատարը: 28. Հայ երգահան: 30. Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 32. Ադրբեջանական վիպերգություններից մեկի հայտնի հերոսուհին: 33. Քաղաք Հայաստանում, Ախուրյանի աջ ափին: 34. Քաղաք Թուրքիայում: 39. Խալցեդոնի տարատեսակ: 41. Քաղաք Արցախում:

Հորիզոնական

7. Հրազդան գետի աննշներից: 8. Բերդ Ողջի գետի ափին, որի պարիսպների մոտ Յունիի Նախարար Անդովկ Յունին պարսության մատնեց Շահուտ արքայի զորաբանակին: 9. Որսի արագավազ, բարձրաարուեստ շուն: 11. Դեմք, պատեհություն: 13. Իմպրեսիոնիստ նկարիչ: 14. Ռուս ծովակալ: 15. Սիրո աստվածը հռոմեական դիցարանում: 16. Զարմանազանազգինների ընտանիքի ծաղիկ: 20. Սեւանի ավազանի գետերից: 22. Հանգած հրաբուխ Գեղամա լեռնաշղթայում: 23. Լեռնաշղթա Հայաստանում: 24. Սփյուռահայ գրող, «Հայոյ բեկորներ» ժողովածուի հեղինակը: 27. Այդր լճի այլ անվանումը: 29. Պաղպաղակ արտադրող հայկական ֆիրմա: 31. «Պրոմեթեւս» հեռուստատեսության ծրագիր: 35. Լատինական Ամերիկայում այս բույսից պատրաստում են թեյ: 36. Դավաճանի կերպար հայ գրականության մեջ: 37. Բույսերի մակաբույծ: 38. Շատակերի կերպար հիշատակվում է հայ բանահյուսության մեջ: 40. Կոշիկի արտադրության հումք: 42. Հրազդան գետի աջ վտակը: 43. Ջրային բազմամյա ծաղիկ:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Մոսկվային վախեցրել է Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան ռազմավարական առանցքը»

ՍՏԱՄԲՈՒԼ. 26 ՀՈՒՆՎԱՐ. ՆՈՅԱՆ ՏՊՈՒՆ. Թուրքիայի լրատվամիջոցները լայնորեն լուսաբանում են Մոսկվայում տեղի ունեցած ԱՊՀ գագաթաժողովը. մասնավորապես Հայաստան-Ադրբեջան բանակցությունները. Անդրկովկասյան հանրապետությունների ղեկավարների հանդիպումը եւ Կովկասյան կայունության պակտ կազմելու Սուլեյման Դեմիրելի նախաձեռնության նկատմամբ ռուսական կողմի դիրքորոշումը:

NTV թուրքական հեռուստաընկերության թղթակիցը Բաքվից հաղորդում է, որ Ալիեւը դրական է գնահատել Պուտինի ԱՊՀ երկրների ղեկավարների խորհրդի նախագահի ընտրվելու փաստը եւ ասել է, որ Պուտինի Ռուսաստանի նախագահի պաշտոնակատար դառնալուց հետո դրական փոփոխություն է նկատվում Ադրբեջանի նկատմամբ Մոսկվայի վարած քաղաքականության մեջ: Թուրքական լրատվամիջոցների տեղեկությունների համաձայն, Պուտինն ընդունել է, որ Ադրբեջանից Չեչնիա գինետինիկա փոխադրելու մասին լուրերը հիմք չունեն: Ալիեւը դրական է գնահատել նաեւ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ինչպես նաեւ Անդրկովկասյան երկրների ղեկավարների հետ ունեցած հանդիպումը: Ալիեւը հայտարարել է, որ Ռուսաստանն անհրաժեշտ ուշադրություն չի դարձնում մեր տարածաշրջանին, եւ ինքը տեղին է համարում վերանայել Մոսկվայի անդրկովկասյան ռազմավարությունը: Թուրքական «Միլիեթ» օրաթերթն իր այսօրվա համարում գրում է, որ ԱՊՀ գագաթաժողովը նոպասակ ուներ խոչընդոտել Ռուսաստանից նախկին ԽՍՀՄ երկրների հեռանալու գործընթացը եւ դիմագրավել տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի շարունակական ուժեղացմանը: Թերթը գրում է, որ «Մոսկվային հաստկաղես վախեցրել է Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան ռազմավարական առանցքի ձեւավորումը: Սակայն Մոսկվան դեռ ազդեցություն ունի այս տարածաշրջանում եւ Պուտինի միջնորդությամբ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների հանդիպումը կրկին առացուցում է այս իրողությունը»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

Արմենտել ՀՁ ՓԲԸ տեղեկացնում է, որ ավարտված են թիվ 39 ԱՅԿ-ի նոր թվային կայանից վերամիացման եւ Երեւանի Հյուսիս-արեւմտյան Գ-3 թաղամասի բնակելի շենքերի հեռախոսաֆիկացման աշխատանքները: Գ-3 թաղամասի այն բնակիչները, ովքեր ցանկանում են հեռախոս տեղադրել, հրավիրվում են 34, 35, 39 ԱՅԿ-ների բաժանորդների սպասարկման բաժին: Բաշինջաղյան 177 հասցեով, հեռախոսների տեղադրումը ձեւակերպելու համար: Չեզ անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր, բնակելի տարածքի նկատմամբ Ձեր իրավունքները հաստատող փաստաթղթեր եւ վճարել հեռախոսի տեղադրման միանվագ ծառայության վարձ 24 հազար դրամ:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

Արմենտել ՀՁ ՓԲԸ տեղեկացնում է, որ ավարտված են թիվ 55/57 ԱՅԿ-ի նոր թվային կայանից վերամիացման աշխատանքները: Արդեն պատրաստ է Սարի-թաղ թաղամասի բաժանորդային ցանցը, ուստի Սարի-թաղի այն բնակիչները, ովքեր ցանկանում են հեռախոս տեղադրել, հրավիրվում են 55/57 ԱՅԿ-ի բաժանորդների սպասարկման բաժին Չարենցի 76 հասցեով, հեռախոսների տեղադրումը ձեւակերպելու համար: Չեզ անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր, բնակելի տարածքի նկատմամբ ձեր իրավունքները հաստատող փաստաթղթեր եւ վճարել հեռախոսի տեղադրման միանվագ ծառայության վարձ 24 հազար դրամ:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑԱՆԱԿ

Իրավագիտական եւ հաղաքագիտական լավագույն վերլուծության համար

Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի որոշմամբ սահմանվել է ամենամյա մրցանակ՝ իրավագիտական եւ հաղաքագիտական լավագույն վերլուծության համար:

Մրցույթի նպատակն է ուշադրություն հրավիրել հաղաքացիական հասարակության, իրավական, ժողովրդավարական պետության կայացման հիմնահարցերին, նպաստել այդ բնագավառի գիտական մտքի զարգացմանը, խթանել հասարակության իրավագիտակցության բարձրացմանը:

Սահմանվել է, որ

ա) Մրցույթին կարող են ներկայացվել մենագրություններ, գրույկներ, գիտական զեկույցներ, հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ:

բ) Հաղթողին շնորհվում է ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի հատուկ մրցանակ եւ դիպլոմ, ինչպես նաեւ 250 հազար դրամի չափով դրամական պարգեւ:

գ) Մրցանակը շնորհվում է ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի որոշմամբ:

Մրցույթին մասնակցելու կարգին ու պայմաններին կարելի է ծանոթանալ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնում (հասցեն՝ Մարշալ Բաղրամյանի պող. 10):

Տեղեկությունների համար զանգահարել 52-99-91, 58-81-45 հեռախոսահամարներով:

ԳԻՄԵՔ ՆՈՐ ՀԱՇԻՎԸ ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿԻ ՀԵՏ

ՄԻԱՅՆ ՄԵԿ ԱՄԻՍ

1999 թ. դեկտեմբերի 27-ից մինչեւ 2000 թ. հունվարի 27-ը միայն
Կոմիտասի մասնաճյուղում
Չեզ կընծեռվի հազարամյակի աննախադեպ առաջարկներից օգտվելու հնարավորություն:

■ **ԱՄՆ ԴՈԼԱՐԱՅԻՆ ԵՎ ՀՀ ԴՐԱՄԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԻ ԱՆՎՃԱՐ ԲԱՑՈՒՄ**

Խնայողական գրույկը Չեզ կտրամադրվի անվճար: Հաշիվ բացելու համար հարկավոր կլինի ներկայացնել միայն անձնագիրը եւ նախնական ավանդը:

■ **ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԱԳՄ ՔԱՐՏ**

■ Ավտոմատ գանձման մեքենաների գործը պատվիրվում է անվճար: Պատվիրեք նոր, զեղչ գնով ԱԳՄ գործ:

■ **ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏԵՂԵՐԻ ՁԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

Առաջին 50 հաճախորդները կվճարեն նախնական վարձի 50%-ը: Խնայեք ձեր փողն այժմ՝ օգտվելով այս բացառիկ ծառայությունից:

Այն հաճախորդները, ովքեր Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի որեւէ մասնաճյուղում արդեն հաշիվ ունեն,
կստանան Էյչ-Էս-Բի-Սի գլխարկ կամ այլ նվերներ,
եթե Բանկ ներկայացնեն մեկ այլ նոր հաճախորդի:

Լրացուցիչ ինֆորմացիայի համար խնդրում ենք դիմել մեր մասնաճյուղ Կոմիտաս 3 հասցեով, կամ զանգահարել 22-87-57:
Աշխատանքային ժամերը:
Երկ. - Ուրբ. 9:30 - 15:00
Շաբաթ 10:00 - 13:00

HSBC

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՐ ԱՇԽԱՐՀԸ

Թողարկված է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կողմից

Ի ԼՈՒՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

Մամուլի ազգային ակումբը «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման «Հայհամակարգիչ» կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Մխիթարյանի հետ:

Հանդիպումը կկայանա հինգշաբթի, հունվարի 27-ին, ժամը 11:00-ին, «Հոլսթեն» սրճարանում (Բուզանդի 1/3):

ՄՄՍ

ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

27 հունվար

ԿԻՆՈ

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.20 Մամուլի կոդակ
10.30 Հեռուստասերիալ «Ուեյնի Մանիֆեստը»
11.00 Գ/ֆ «Դեժա Վյու»
12.40 Մուլտֆիլմ «Հերակլեսը եւ էմմեկտան»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Մինչեւ 17
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 Խոշոր շահում
19.50 Տագնաղ
20.25 Արակարգ ալիք
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 «HSBC բանկ Հայաստան» ներկայացնում է
21.45 Պրեմիերա
22.00 Բարի ակնթարթ
22.50 Հեռուստամարաթոնի էջերից
23.10 Հիթ շեթթ
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս

9.05 Վաղ առավոտյան
10.00 Մուլտֆիլմ
10.30 «Մոսկվան եւ ընկ.»
11.10 Տետաֆիլմի պրեմիերա «Հայաստան, երկիր դրախտավայր»
11.35 Վավ. ֆիլմ «Սեւ ուրուրները»
11.50, 18.05, 20.30, 00.10 Լուրեր
18.20 Մուլտֆիլմ
18.45 Մանկական համերգ
19.10 Սերիալ «Օլիվ ամրոցը» (3-րդ մաս)
20.00 Երաժշտական ծրագիր «Սոլի բանալի»
21.00 Սերիալ «Մոլ Ֆլանդերս» (2-րդ մաս)
21.50 Գ/ֆ «Օդային բանս»
23.35 Ուշ երեկոյան

ՏՏ

9.00 Տոմար
ավարտին Կամ-կամ (կրկնություն)
19.00 Չղջիկ
19.30, 21.30, 23.30 Սուրհանդակ
19.50 Մամուլի խոսնակ
20.05 Ի դեպ
20.30 Աստղաբեզ
21.15 Հրաշարակ
21.50 Գ/ֆ «Արագ եւ մեռած»
24.00 Զրո ժամ
00.05 Գ/ֆ «Բոննին ու Քլայդը» (ավարտին Սուրհանդակ)

ՀԱՅԿԱԿԱՆ

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.15 Մուլտսերիալ «Երազներ որսացողները»
16.45 Վիկտորինա երեխաների համար
17.00 «100 տոկոս» ծրագիրը
17.30 ... Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Կալամբուր
19.55 Գործընթաց
20.50 Սերիալ «Տոկուն աղջիկները»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/ֆ «Մուրոմյան ճանապարհին» (դերերում Ա. Լիվանով, Յու. Կուրաուսկայտե, Մ. Մոլդախանով, 1993 թ.)
00.35 Արձաթե գունդ. Գորկու սերն ու մահը
01.30 Նորություններ
01.50 Գ/ֆ «Պահակը»

ՐՏՊ

7.30-10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հերթապահի բաժանմունք
10.20 Քվանտային բժշկագիտություն
10.30 Հեռուստահանդես «Արենա սպորտ»
11.00 Հոմեոպաթիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Մուլտֆիլմ «Հելիաք հիմար Վոլոդյայի մասին»
12.05 Սերիալ «Մեր գաղտնիքի ամառը»
13.00 Իմ XX դարը
13.25 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում
13.50 Հոմեոպաթիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես «Կանանց հաղաք»
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.05 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խաղաթուղթ բազմոցի վրա
17.30 Մուլտսերիալ «Գաղտնի գործակալները»
18.20 Ստարակ
19.05 Սերիալ «Լոս Անջելեսի տարը-2»
20.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիքները»
21.25 «Սոիտակ թուրակ» ակումբ
22.45 Կինոյի ժամ. դետեկտիվ «Արտիստի» հրաժեշտի հյուրախաղը»
00.25 Հերթապահի բաժանմունք
00.40 Կինո+TV
02.20 Թեթեւ ասլետիկա. միջազգային մրցումներ «Ռուսական ձմեռ-2000»
03.50 Խաղաթուղթ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Հեռ. 590000 • http://www.spyur.am

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Պատվերի թիվ 65. Դասիչ 69150. Պատուէր 1187 Տպաքանակը 4000 Ստորագրված է տպագրության 26.01.2000 Գինը 100 դրամ